# ՀԱՐԱՍՈՒՆ

1984

Դ

Հ'ՕՀ 146



ԽԱ
ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Հոկտեմբեր

1984

ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ՝ ՀԱՄԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ԽՈՐԵՆՅԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ, ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

**Գոհութիւն և փառք նախախնամող մեր Աստծուն, որի կենարար հովանու ներքոյ, շէն ու պայծառ մեր աղօթքի Տները Սուրբ Հոգու շնորհներն են բաշխում մեր հաւատաւոր ժողովրդին ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:**

**Երջանիկ ենք հաստատելու, թէ մեր երջանկայիշատակ եկեղեցական հայրերի հեղինակած ու կարգաւորած պաշտամունքային և սրբազան պատարագի արարողութիւնները մեր օրերին առաւել քաղցրանում ու ներշնչիչ են դառնում բազմաձայն ներդաշնակ երգեցողութիւններով: Սրբազան երաժշտութիւնը ա-**

ռանձին հմայք ու հոգեպարար շունչ է հաղորդում աղօթքի խօսքին: Այդպիսին է մանաւանդ մեծն Կոմիտաս վարդապետի պատարագի երաժշտութիւնը, գնահատուած թէ մեր ժողովրդի և թէ այլազգի երաժշտագէտների կողմից իբրև բարձրարուեստ ստեղծագործութիւն: Մեր եկեղեցում սիրուած ու գնահատուած է նաև Մակար Եկմալեանի պատարագը՝ քաղցրօրէն հնչող մեր եկեղեցիների կամարների ներքև:

Այսօր, Մենք մի բարի լուր ունենք բերելու բոլորիդ, որ մեր Եկեղեցին հարստացաւ պատարագի նոր յօրինուած մի երգեցողութեամբ, որի հեղինակն է շնորհալի երաժիշտ, երկար տարիներից ի վեր Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի հմուտ խմբավար Խորէն Մեյխանեջեանը:

Երեք տարիների տքնաջան աշխատանքի արդիւնք է սոյն գործը, յօրինուած հայ հոգևոր երաժշտութեան ոգով, ազգային մելոսի զգացողութեամբ և հարազատ մեր եկեղեցական աւանդներին ու հոգևոր մթնոլորտին:

Մենք մօտիկից հետևած լինելով պատարագի սոյն երգեցողութեան ստեղծագործական ընթացքին և տեղեակ դառնալով Հայաստանի հեղինակաւոր երաժշտագէտների բարձր գնահատանքին, այսու Մեր կոնդակով արտօնում ենք և յանձնարարում մեր Եկեղեցու թեմական առաջնորդներին ու հոգևոր հովիւներին, որ սոյն գործը ընդունելի տարբերակ նկատուի ցարդ նուիրագործուած՝ պատարագի երգեցողութեանց շարքին և կատարուի Հայաստանեայց եկեղեցիներում իբրև խորէնեան պատարագ:

Մենք շնորհաւորում ենք հեղինակին և օրհնում նրա երաժշտական տաղանդի սոյն արգասիքը:

Թող հայոց աղօթքի Տներում յաւերժ ապատ ու լուսաւոր հնչի սուրբ խօսքն ու երգը մեր աննման պատարագի խորհրդի:

«Սաղմոս ասացէք Աստուծոյ մերում, սաղմոս ասացէք թագաւորին մերում, սաղմոս ասացէք: Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է, սաղմոս ասացէք նմա իմաստութեամբ» (Սաղմ. ԽԶ 7—8): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20 Հոկտեմբերի
1984 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԳ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1332



# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ

ՄԵԾԱՀԱՐԳ ԴՈԿՏ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈ,
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

Ժնև

Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ուրախ սրտով շնորհավորում ենք Ձեր ընտրությունը որպես գլխավոր քարտուղար Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի:

Հայցում ենք Աստուծո օրհնությունը և օգնականությունը Ձեզ, որպեսզի Ձեր պատասխանատու բարձր դիրքով և գործունեությամբ խորացնեք ի Քրիստոս հոգևոր միության ոգին աշխարհի բոլոր Եկեղեցիների միջև հառավել ամրապնդումն համաշխարհային քրիստոնեական եղբայրության:

Հավատում ենք նաև, որ Ձեր պաշտոնավարության շրջանում Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը միշտ հրավեր պիտի կարդա բոլոր քույր Եկեղեցիներին, որպեսզի, ներշնչված Քրիստոսի սիրո և արդարության ոգով, իրենց նպաստը բերեն մեր օրերի աշխարհը հուզող հարցերի լուծման և խաղաղության հաստատման համայն աշխարհում՝ ընդհանուր վինաթափմամբ և պետությունների համերաշխ գործակցությամբ:

«Երանի խաղաղարարաց զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» (Մատթ. Ե 9):

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
18 հուլիսի 1984 թ.

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

### ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Ստացա Ձեր հեռագիրը, որով հղում եք ինձ Ձեր օրհնությունը՝ հայտնելով Ձեր շնորհավորանքն ու բարեկամական զգացումները իմ ընտրության առիթով որպես Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար: Մեծապես զգացված եմ և հայտնում եմ Ձեզ իմ խորին շնորհակալությունը:

Ապավինում եմ Ձերդ Սրբության բարեխոս աղոթքներին՝ անսայթաք ընթանալու համար իմ կոչման և առաքելության ճանապարհի վրա:

Հաճույքով եմ հիշում միշտ իմ այցելությունը Ս. Էջմիածին մի քանի տարիներ առաջ: Այդ այցելությունը մեծ առանձնաշնորհում եղավ ինձ համար և թանկագին պատեհություն ընձեռեց ինձ՝ գտնվելու ձեր Եկեղեցու հոգևոր կենտրոնում և ձեր հավատացյալ ժողովրդի հետ մասնակից լինելու ձեր աղոթքին և ծեսին: Այդ բոլորը ձեր Առաքելական Եկեղեցու մեծ նպաստն է քրիստոնյա աշխարհին:

Հույս ունեմ, որ մոտ ապագայում առիթ կունենաք այցելելու Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոն, որպեսզի ձեր Եկեղեցու հոգևոր շնորհները բաշխվեն նաև էկումենիկ կենտրոնի իմ բոլոր գործընկերներին:

Մի անգամ ևս իմ անկեղծ շնորհակալությունն եմ հայտնում Ձերդ Սրբությանը՝ ներկայացնելով Ձեզ Ձեր խոնարհ ծառայի և նրա ընտանիքի բարեխոսության աղոթքի և քրիստոնեական համերաշխության հավաստիքը:

ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈ

Ժնև,
13 օգոստոսի 1984 թ.



# ԽՍՔԱՑՔԱԿԱՆ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ 60-ԱՄՅԱԿԸ

Այս տարի, հունվարի 1-ին, լրացավ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի ստեղծման 60-ամյակը:

Վեց տասնամյակներ շարունակ Գերագույն Հոգևոր Խորհուրդը Մայր Աթոռում, Ամենայն Հայոց Հայրապետների կողքին, իբրև Հայ Եկեղեցու գործերի տնօրինման խորհրդատու վերին մարմին, կարևոր դեր է կատարել մեր ազգային եկեղեցական կյանքում:

Հայ Եկեղեցին կանոնական ավանդությունների և ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված Եկեղեցի է: Ազգ և Եկեղեցի կազմում են միաձույլ և անքակտելի մի ամբողջություն: Դա նշանակում է, որ Հայ Եկեղեցու կառավարման գործում հոգևորականների հետ մասնակցում է նաև հավատացյալ հայ ժողովուրդը իր ներկայացուցիչներով:

Հայաստանյայց Եկեղեցին հնուց անտի առաջնորդվել ու ղեկավարվել է եկեղեցական կանոններով, եկեղեցական-ազգային ժողովների որոշումներով, օրենքի ուժ ստացած ավանդություններով, ընտրյալ եկեղեցական մարմիններով:

Հայ ժողովրդի և Եկեղեցու պատմությունը սերտորեն կապված են միմյանց: Մեր ժողովրդի դառն ու դժնդակ կյանքի պատմության ելևէջներին զուգահեռ է ընթացել Հայ Եկեղեցու պատմությունը:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումով (1828 թ.) ապատագրվեց հայ ժողովրդի արևելյան հատվածը պարսիկ բռնակալների դաժան լծից: Հայ ժողովրդի և Եկեղեցու համար բացվեց պատմության մի նոր շրջան քրիստոնյա ռուսական պետության հովանավորության ներքո:

Ցարական իշխանությունները քաջ գիտակցելով այն բարձր հեղինակությունը, որ վայելում էր Ս. Էջմիածնի Ընդհանրական Կաթողիկոսական Աթոռը հայության բոլոր խավերի մեջ, որոշեցին մշակել մի կանոնադրություն՝ ամուր հիմքերի վրա դնելու համար Հայ Եկեղեցու ղեկավարումն ու եկեղեցական հաստատությունների գործունեությունը:

Այս նպատակով ահա մշակվում է Հայ Եկեղեցու վարչա-կազմակերպչական մի կանոնադրություն (Պոլոժենիա), որը 1836 թ. մարտի 11-ին ներկայացվում է կայսեր հաստատության:

«Պոլոժենիա»-ն թեև զուտ եկեղեցական մի կանոնադրություն էր, բայց ունեցավ մեծ ազդեցություն ոչ միայն Ռուսաստանի հայերի ներքին կյանքի, այլև համայն հայության ճակատագրի վրա:

«Պոլոժենիա»-ն հանդիսացավ Ռուսաստանի սահմաններում ապրող բոլոր հայերի ազգային, համայնքային ինքնորոշման ու ճանաչման կարևոր օրենսգիրք:

«Պոլոժենիա»-ն կյանքի կոչվեց և գործադրվեց «Հայ-Գրիգորյան Եկեղեցու Կանոնադրություն» անվան տակ: Այն բաղկացած էր 10 գլուխներում ամփոփված 141 հոդվածներից, որոնք հիմնականում վերաբերում էին հայ հոգևորականության իրավունքներին և Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր գործերի ու հաստատությունների կառավարմանը:

«Պոլոժենիայի» հիման վրա հետագայում

կազմվեց Հայ Եկեղեցու Սինոդը, որի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի նախագահությամբ 1837 թ. փետրվարի 22-ին:

«Պոլոժենիա»-ն, սակայն, նաև սահմանափակում էր հայոց համար ավանդական սովորություն ու օրենքի ուժ ստացած Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավունքները՝ նրան վերապահելով միայն հոգևոր ու դավանական հարցերի բարձրագույն հեղինակությունը: Կաթողիկոսի կատարելիք ամեն մի նախաձեռնության վերաբերյալ կառավարությունը Սինոդի կարծիքն էր հաշվի առնում:

«Պոլոժենիա»-ն խախտեց նաև Հայ Եկեղեցու ժողովրդավարական սկզբունքները՝ անտեսելով և մերժելով հայ աշխարհիկ տարրի մասնակցությունը Եկեղեցու վարչության և նրա մատակարարման մեջ:

1920 թ. նոյեմբերի 29-ին Արևելյան Հայաստանում հաստատված խորհրդային կարգերի շնորհիվ երկար դարեր շարունակ արյուն, ավեր ու արցունք տեսած մեր ժողովուրդը վերջնականապես փրկվեց ֆիզիկական բնաջնջումից և ոտք դրեց իր նորագույն պատմության ճանապարհին:

Արմատապես փոխված հասարակական նոր պայմաններում փոխվեց նաև Հայ Եկեղեցու դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում:

1922 թ. փետրվարի 2-ին հաստատված Խորհրդային Հայաստանի նոր սահմանադրության համաձայն, Եկեղեցին բաժանվեց պետությունից, և մինչ այդ Եկեղեցու տնօրինության տակ գտնվող մի շարք կալվածային, ուսումնական .ու քաղաքացիական հաստատությունների գործերն ու նրանց ղեկավարումը դրվեցին պետական մարմինների իրավասության ներքո:

Այսպիսով՝ Հայ Եկեղեցու և նորաստեղծ հայկական պետության փոխհարաբերությունները հաստատվեցին նոր հիմքերի վրա: Հայ Եկեղեցու հիմնական առաքելությունն էր լինելու հայ հավատացյալ ժողովրդի քրիստոնեական դաստիարակությունն ու նրա հոգևոր կարիքների բավարարումը:

Ստեղծված քաղաքական և հասարակական այս նոր պայմաններում «Պոլոժենիան» և Սինոդը այլևս կորցրած լինելով իրենց իրավական ուժն ու նշանակությունը՝ Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը նպատակահարմար համարեց 1 հունվար 1924 թ. հմր. 1 հայրապետական կոնդակով հռչակել Մայր Աթոռում Գերագույն Հոգևոր Խորհրդի ստեղծումը:

Ահա թե ինչ է գրում այդ մասին երանաշնորհ Հայրապետը իր կոնդակում. «...Ի նկատի առեալ Մեր կայս ամենայն հանգամանս և կպայմանս և կպարագայս ժամանակիս և Մայր Աթոռոյս, որպէս և վանջատումն Եկեղեցւոյ ի պետութենէ ըստ քաղաքական օրինաց Խորհրդային իշխանութեան, որով «Պոլոժենիա» նախկին պետական կանոնադրութիւնն, ուրեմն և Սինոդն Հայոց Սբ. Էջմիածնի, արդէն իսկ կորուսանէ վիրաւական և վբարոյական նշանակութիւն և կապդեցութիւն իւր... ուստի Մեք ... անհրաժեշտ և անյետաձգելի վարկաք Հայրապետական կոնդակաւ Մերով հաստատել առ Մեկ ի Մայր Աթոռ... կԳերագոյն Հոգևոր Խորհուրդ ի տեղի Սինոդի և Դիւանի Մերոյ...»:

Ըստ հայրապետական կոնդակի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ են նշանակվում Տ. Մեսրոպ, Տ. Խորեն, Տ. Բագրատ արքեպիսկոպոսները և Տ. Գարեգին, Տ. Զավեն, Տ. Գյուտ եպիսկոպոսները՝ Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսի նախագահության ներքո:

Համաձայն հայրապետական նույն կոնդակի, ի պաշտոնե Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ են համարվում Հայ Եկեղեցու թեմական բոլոր առաջնորդները:

Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահը կամ նրա նիստերին նախագահողը ինքը՝ կաթողիկոսն է լինում, իսկ նրա բացակայության դեպքում՝ կաթողիկոսական տեղակալը կամ ավագագույն անդամը:

Ըստ նույն կոնդակի, Գերագույն Հոգևոր Խորհուրդը իրավասություն ունի Հայաստանյայց Եկեղեցու ներքին և արտաքին թեմերի կրոնական, վարչական և տնտեսական բոլոր տեսակի հարցերը քննարկելու և դրանց վերաբերյալ վճիռ կայացնելու: «Ամենայն խնդիրք և գործք կրօնականք, վարչականք և տնտեսականք Մայր Աթոռոյս, եկեղեցեաց և թեմօրէից Հայաստանի և արտասահմանի արկանին ընդ քննութեամբ յատենի Գերագոյն Խորհրդոյ և ստանան կվախճանական որոշումն և կլուծումն»: Նրան է վերապահված նաև ազգային-եկեղեցական ժողովներ հրավիրելու և գումարելու իրավունքը:

Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը նույն թվականի իր հաջորդ կոնդակով, ուղղված նորաստեղծ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին, հանձնարարում է կազմակերպել Գերագույն Հոգևոր Խորհրդի դիվան, ինչպես նաև կազմել ներքին մի հրահանգ Գերագույն Հոգևոր Խորդրհի գործառնության ու գործավարության վերաբերյալ:

Հանձնարարվում է նաև Մայր Աթոռի գանձարանը դնել Գերագույն Հոգևոր Խորհրդի հսկողության տակ և Ս. Էջմիածնի նախկին Սինոդն ու հայրապետական դիվանը միավորելով՝ նրանց բոլոր գործառնությունները հանձնել նույն Խորհրդի տնօրինմանը:

1924 թ. հունվարի 2-ին նորաստեղծ Գերագույն Հոգևոր Խորհուրդը գումարում է իր անդրանիկ նիստը: Նիստին ներկա են լինում Տ. Մեսրոպ և Տ. Բագրատ արքեպիսկոպոսներն ու Տ. Զավեն և Տ. Գյուտ եպիսկոպոսները:

Վեհափառ Հայրապետը հիվանդության պատճառով բացակայելով այդ նիստից՝ ժողովին նախագահում է Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսը: Ժողովում ընթերցվում են Տ. Տ. Գևորգ Ե կաթողիկոսի 1924 թ. հունվարի 1-ի հմր. 1 և 2 կոնդակները Սուրբ Էջմիածնում Գերագույն Հոգևոր Խորհուրդ հաստատելու, Խորհրդի անդամների, նրանց գործունեության և իրավասությունների վերաբերյալ: Ապա մեկ առ մեկ քննարկվում են կոնդակներում նշված կետերը և յուրաքանչյուրի վերաբերյալ ընդունում համապատասխան որոշումներ՝ հետագայում դրանք ներկայացնելու համար Վեհափառ Հայրապետի ուշադրությանն ու հաստատմանը:

Հետևյալ օրը, հունվարի 3-ին, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի երկրորդ նիստը, որի ընթացքում, ի թիվս քննարկված այլ հարցերի, ընդունվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի գործառնության ու գործավարության վերաբերյալ 17 կետերից բաղկացած մանրամասն հրահանգ:

Հայ Եկեղեցու բարեկարգության ճանապարհին կատարված առաջընթաց կարևոր քայլ հանդիսացավ Մայր Աթոռում Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմակերպումը, Խորհուրդ, որի գործունեությունը հայրենիքում ստեղծված հասարա-քաղաքական նոր պայմաններում բարձրացրեց Ամենայն Հայոց Հայրապետության վարկն ու հեղինակությունը հաչս Հայ Եկեղեցու հոգևոր դասի և համայն հայության: Ներքին թեմերի ու սփյուռքահայ գաղթօջախների ազգային-հասարակական գործիչներից ու հոգևորականներից ստացվեցին երախտագիտական ու շնորհավորական նամակներ՝ ուղղված Տ. Տ. Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Մայր Աթոռում Գերագույն Հոգևոր Խորհրդի ստեղծման կապակցությամբ:

Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Թորգոմ եպիսկոպոս Գուշակյանը (հետագայում՝ Պատրիարք Երուսաղեմի հայոց Ս. Աթոռի) սրտառուչ խոսքերով գրում էր. «Սրբատառ կոնդակ Հօրդ հանուրց Հայաստանեայցս... առբերէր մեզ վաւերիս նորոգ հաստատութեան Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի՝ ըստ ոգւոյ և օրինաց Սրբոյ Եկեղեցւոյս մերոյ»: Ապա՝ «Ամենեքեան շնորհ ունիմք վԱստուծոյ Ամենակալէն, զի ընդ ապատութեան Հայրենեաց մերոց պարգևեաց և վապատութիւն Եկեղեցւոյ, որպէսզի տացի մեզ յայսմհետէ վարիլ բնիկ օրինօք և կանոնիւք ազգի մերոյ և կրօնի»:

Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքճյանը 1941 թ. Ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովին ներկայացնելով Գերագույն Հոգևոր Խորհրդի 1932—1941 թվականների գործունեության վերաբերյալ իր տեղեկագիրը՝ նշում էր այն կարևոր միջոցառումներն ու խնդիրները, որոնց իրագործման համար հետևողական աշխատանք է հանդես բերել Գերագույն Հոգևոր Խորհուրդը:

Տեղեկագրի վերջում նշվում էր, որ Գերագույն Հոգևոր Խորհուրդը պատասխանատու է ազգային-եկեղեցական ժողովի առջև: Յուրաքանչյուր անգամ ազգային-եկեղեցական ժողովին Գերագույն Հոգևոր Խորհուրդը ներկայացնում էր իր հրաժարականը ցնոր տնօրինություն և ընտրություն:

Հայ Եկեղեցու ժողովրդավարական սկզբունքներն առավել ևս ընդլայնելու և Գերագույն Հոգևոր Խորհուրդը ներկայացուցչական մարմնի վերածելու նպատակով 1945 թ. նորընտիր Տ. Տ. Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսը ազգային-եկեղեցական ժողովի հաստատությանը ներկայացրեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմը, ուր հոգևորականների շարքին ընդգրկված էին նաև ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, Բժիշկ Հայկ Եղիազարյանը, երկրաբան Ստ. Կամսարականը և բանասեր Երվանդ Շահազիզը, որոնց ունեցած բարձր դիրքի ու հեղինակության շնորհիվ բարձրացավ նաև հեղինակությունը Գերագույն Հոգևոր Խորհրդի:

Հայ Եկեղեցու և Մայր Աթոռի պատմության մեջ վերելքի ու ծաղկումի անանխընթաց մի շրջան սկսվեց, երբ 1955 թ. Ս. Լուսավորչի գահին բազմեց Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Իր գահակալության առաջին օրվանից Հայոց Հայրապետի գլխավոր մտահոգությունը եղավ Մայր Աթոռի հոգևոր, վարչական, տնտեսական ու դիվանական գործերը դնել կանոնավոր ու հաստատուն հիմքերի վրա:

Համալրվեց նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմը հոգևորական և աշխարհական նոր անդամներով, որոնք իրենց խորհուրդներով ու գործակցությամբ մեծապես նպաստեցին նորընտիր Հայրապետի եկեղեցական, մշակութային, շինարարական և ազգային-հայրենասիրական ձեռնարկումների իրագործմանը:

Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմում, արքեպիսկոպոսների ու եպիսկոպոսների կողքին, ընդգրկվեցին հասարակական ու մշակութային անվանի գործիչներ՝ գրող Ավետիք Իսահակյանը, լեզվագետ-ակադեմիկոս Արարատ Ղարիբյանը, գրականագետ

պրոֆ. Առաքել Առաքելյանը, դոցենտ Արտաշես Տիրացյանը, վաստակավոր ուսուցիչ Արամ Աղաջանյանը:

1958 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը Իր ծննդյան 50-ամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առիթով Իր հաշվետու վեկուցման մեջ, բարձր գնահատելով Գերագույն Հոգևոր Խորհրդի գործունեությունը, ասում էր. «Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր աշխատանքով մեծապես օգտակար եղած է Մեզ՝ իբրև խորհրդատու և գործակից մարմին»:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը այսօր էլ, գիտակից իր բարձր կոչմանն ու դերին, մեծ նվիրվածությամբ իր գործոն մասնակցությունն է բերում ազգային, եկեղեցական բազմապան հարցերի լուծմանն ու Հայոց Հայրապետի եկեղեցաշեն ծրագրերի կենսագործմանը:

Թող Տերը անսասան և միշտ ծաղկյալ պահի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետությունը:



# ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. ԳԵՎՈՐԳ Ե ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Ամենապատիւ պատրիարքի Հայոց Երուսաղէմի Տ. Եղիշէ Արքեպիսկոպոսի Դուրեան, Գերաշնորհ Պատրիարքական Տեղապահի հայոց Կ. Պոլսոյ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի Արսլանեան, կենտրոնական վարչութեան Ազգային ժողովոյ Հայոց Կ. Պոլսոյ, Գերաշնորհ Առաջնորդաց, Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց, Արժանապատիւ հոգևոր հովուաց, քահանայից և ամենայն հոգևորականաց, թեմական խորհրդոց, վարչութեանց, հոգաբարձութեանց և խորհրդոց եկեղեցեաց Հայոց, հարապատ որդւոց Մայր Աթոռոյս ողջոյն և օրհնութիւն հայրապետական:

Առաքելական Ս. Եկեղեցի Հայաստանեայց յընթացս բազմադարեան գոյութեան իւրոյ պահեալ է անխախտ վոգի ժողովրդական և ազգն Հայոց, որ ցրուեալ կայ ի սփիւռս աշխարհի, լցեալ գոլով ջերմեռանդ հաւատով, յուսով և սիրով առ ազգային բազմաչարչար Եկեղեցին իւր, ընտրեալ է վամենայն պաշտօնեայս իւր, սկսեալ ի Հայրապետէն հանուրց Հայոց մինչև վվերջին սպասաւորն Եկեղեցւոյս, նոյնպէս և վամենայն վարչութիւնս, վխորհուրդս և վհոգաբարձութիւնս, ազատ և անկաշկանդ կամօք իւրովք: Եւ դարաւոր ընտրողական և ժողովրդական ոգին և ուղղութիւն այդ լեալ է հանապազ խարիսխ միութեան և աղբիւր կենսունակութեան Ս. Եկեղեցւոյս Հայոց և զօրեղ հիմնա-

պատճառ ազգային մտաւոր և բարոյական-կրօնական յառաջդիմութեան ժողովրդեան մերոյ:

Ի սկիզբն ինն և տասներորդ դարու երկրամասն Հայաստան աշխարհիս, որպէս և Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, անկանելով ընդ իշխանութեամբ միապետական Ռուսիոյ, դժբախտաբար թուլացան և նսեմացան ընտրողական սկզբունք և ժողովրդական ոգի աստ առ մեզ ընդ ճնշմամբ քաղաքական իշխանութեան և կաշկանդմամբ «Պոլօժենիա» կոչեցեալ բարձրագոյնս հաստատեալ կանոնադրութեան մինչ ցայն աստիճան, զի ծայրագոյն հոգևոր իշխանութիւնն Հայոց, յընթացս տասնեակ ամաց, մաքառելով ընդդէմ բռնութեանց, հալածանաց և իրաւազրկութեանց ժողովրդական եկեղեցւոյս և այլ ազգային հաստատութեանց մերոց, աշխատեալ է վասն հիմնելոյ զթեմական ժողովս և զխորհուրդս ազատ մասնակցութեամբ և ընտրութեամբ ժողովրդականաց մերոց, վասն որոյ երջանկայիշատակ նախորդք Մեր Տ. Տ. Մկրտիչ Խրիմեան և Տ. Տ. Մատթէոս Իզմիրլեան կաթողիկոսք ամբաստանեալ եղեն ի կողմանէ կենտրոնական կառավարութեան Ռուսաց ի հակապետական ընթացս:

Ի 1917 ամի յեղաշրջմամբ կառավարութեան Ռուսիոյ թոթափեցաւ բռնապետական լուծն, զկնի որոյ միայն հնար եղև և յաջողեցաւ Մեզ ի նմին իսկ ամի հրաւիրել աստ ի Սբ. Էջմիածին զհամագումար կալմեալ ի կուսակրօն և յաշխարհիկ հոգևորականաց Հայոց Ռուսաստանի վասն խորհրդակցութեան և վասն մշակման ծրագրաց բարենորոգութեան Եկեղեցւոյս Մերոյ: Եւ այնուհետև մինչ Մեք զմտաւ ածէաք ընդ փոյթ կազմակերպել զազգային-եկեղեցական ժողով, հրաւիրելով յամենայն կողմանց և ի թեմօրէից զհոգևոր և զաշխարհիկ պատգամաւորս, զընտրեալս ի ժողովրդականաց Մերոց, տարաբախտաբար իրադարձութիւնք և հանգամանք ցաւալիք, աղետաբեր պատերազմք և խռովութիւնք յաշխարհիս մերում արգելք եղեն Մեզ ի կատար ածել զցանկալի մտադրութիւն և զորոշումն Մեր, վասն որոյ եկեղեցական-վարչական, կրօնական-ծիսական և այլ բազմազան ազգային խնդիրք և գործք բարենորոգութեան և բարեկարգութեան մնացին յանորոշ վիճակի, սակայն պահանջէին ի Մէնջ զվախճանական տնօրէնութիւն և զշուտափոյթ կարգաւորումն:

Արդ՝ ի նկատի առեալ Մեր զայս ամենայն հանգամանս և զպայմանս և զպարագայս ժամանակիս և Մայր Աթոռոյս, որպէս և զանջատումն Եկեղեցւոյ ի պետութենէ ըստ քաղաքական օրինաց Խորհրդային Իշխանութեան, որով «Պոլօժենիա» նախկին պետական կանոնադրութիւնն, ուրեմն և Սինոդն Հայոց Սբ. Էջմիածնի, արդէն իսկ կորուսանէ զիրաւական և զբարոյական նշանակութիւն և զազդեցութիւն իւր, և տեսեալ Մեր, զի չէ մարթ փութով հրաւիրել զազգային-եկեղեցական ժողով, որ է լիազօր մարմին և ազատ տնօրինող ամենայն գործոց և խնդրոց վերաբերելոց բարենորոգութեան Հայաստանեայց Եկեղեցւոյս ըստ կամաց և աւանդական կարգաց Եկեղեցւոյ Մերոյ, և տեսեալ Մեր, զի Մեք ևս կամք ծանրաբեռնեալ ամօք և զշտօք բազմօք և զի այլ ևս անհնարին համարիմք թողուլ զայդ ամենայն խնդիրս և զգործս յանորոշ վիճակի, առանց սահմանման և վախճանական որոշման, ի նկատի առեալ նաև զգրութիւնս, ընկալեալս ի Միաբանութենէ և զմանրամասն բացատրութիւնս Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց Մայր Աթոռոյս, նոյնպէս և զդիմումն առ Մեզ ի թեմական Առաջնորդաց և յականաւոր ազգայնոց ի թեմօրէից Մերոց, ուստի Մեք Ծայրագոյն Պատրիարք և Կաթուղիկոս Ամենայն Հայոց և Պետ Հայաստանեայց Սբ. Եկեղեցւոյ, անհրաժեշտ և անյետաձգելի վարկաք Հայրապետական Կոնդակաւ Մերով հաստատել առ Մեզ ի Մայր Աթոռոջ ժամանակաւորապէս, մինչ զկազմակերպումն ազգային-եկեղեցական ժողովոյ, զԳերագոյն Հոգևոր Խորհուրդ ի տեղի Սինոդի և Դիւանի Մերոյ, ըստ այսմ.

ա) Գերագոյն Խորհուրդ Հայոց Սբ. Էջմիածնի կալմեալ կայ ընդ նախագահութեամբ Մերով ի վեցից փորձառու Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց, որք են՝ Գերաշնորհ Տ. Մեսրոպք, Տ. Խորէն և Տ. Բագրատ Արքեպիսկոպոսունք, Գերապատիւ Տ. Գարեգին, Տ. Զաւէն և Տ. Գիւտ Եպիսկոպոսունք:

բ) Կարգեմք կամենայն առաջնորդս թեմօրէից Մերոց անդամս Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ և ի ժամ ներկայութեան նոցա աստ ի Սբ. Էջմիածին և կամ ի դէպս անհրաժեշտութեան յատուկ հրաւիրանօք եկեսցեն և մասնակից լիցին ժողովոց Գերագոյն Խորհրդոյ:

գ) Ի բացակայութեան Մերում ի ժողովոց Գերագոյն Խորհրդոյ, Տեղակալն Մեր է նախագահող խորհրդոյն:

դ) Ամենայն խնդիրք և գործք կրօնականք, վարչականք և տնտեսականք Մայր Աթոռոյս, եկեղեցեաց և թեմօրէից Հայաստանի և արտասահմանի արկանին ընդ քննութեամբ յատենի Գերագոյն Խորհրդոյ և ստանան կվախճանական որոշումն և կլուծումն:

ե) Գերագոյն Հոգևոր Խորհուրդն պարտ է ըստ հնարաւորութեան և ներման հանգամանաց, փութացուցանել կկազմակերպումն ազգային-եկեղեցական ժողովոյ, ստանալով ի բարեպատեհ ժամանակի կթոյլատուութիւն ի Խորհրդային իշխանութենէ Հայաստանի:

Ծանուցանելով կվերոհիշեալ Հայրապետական կարգադրութիւնս ամենեցուն Ձեզ, սիրելի եղբարք և որդեակք, լիայոյս եմք, զի դուք և ամենեքեան ի բացառիկ ժամանակի Մերում, միշտ և հանապազ աջակից և սատար լիջիք Գերագոյն Հոգևոր Խորհրդոյս Սրբոյ Էջմիածնի յամենայն գործս, որք հային ի բարենորոգումն, ի բարգաւաճումն և ի պայծառութիւն Հայաստանեայց Սբ. Եկեղեցւոյս և այլ ազգային հաստատութեանց մերոց ընդ ամենայն տեղիս:

Օրհնելով կՁեզ կամենեսեան, մաղթեմք ի Տեառնէ պարգևել Ձեզ իմաստութիւն և զօրութիւն վասն ի կատար ածելոյ զամենայն պարտիս Ձեր առ Մայր Աթոռս, առ Հայաստանեայց Սբ. Եկեղեցին ամենայն եռանդեամբ և սրբութեամբ:

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ: Ամէն:

ՎՇՏԱԼԻ ԳԷՈՐԳ Ե.
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 1 Յունուարի 1924 ամի
Ըստ Տօմարիս ՌՅՀԳ (1373)
ի Հայրապետութեան Մերոյ ԺԳ. ամի
յԱրարատեան Մ. Աթոռ Ս. Էջմիածնի.
Ի Վաղարշապատ.
Թ. 1.



# ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. ԳԵՎՈՐԳ Ե ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Անդամոց Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ Հայոց Սրբոյ Էջմիածնի Գերաշնորհ Տ. Մեսրովբ, Տ. Խորէն և Տ. Բագրատ Արքեպիսկոպոսաց և Գերապատիւ Տ. Գարեգին, Տ. Զաւէն և Տ. Գիւտ Եպեսիկոպոսաց, հարապատ որդւոց Մայր Աթոռոյս, ողջոյն և օրհնութիւն հայրապետական:

Հայրապետական կոնդակաւ Մերով ի 1-ն Յունուարի 1924 ամի ընդ համարաւ 1, պատճէն որոյ ընդ սմին առաքեմք, հաստատեցաք ի տեղի Սինոդի և Դիւանի Մերոյ կՊերագոյն Հոգևոր Խորհուրդ, ըստ այսմ.

Ա. Գերագոյն Հոգևոր Խորհուրդ Հայոց Ս. Էջմիածնի կազմեալ կայ ընդ նախագահութեամբ Մերով ի վեցից փորձառու Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց.

Բ. Ամենայն Առաջնորդք թեմօրէից մերոց են անդամք Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ և ի ժամ ներկայութեան նոցա աստ ի Սուրբ Էջմիածին և ի դէպս անհրաժեշտութեան յատուկ հրաւիրանօք եկեսցեն և մասնակից լիցին ժողովոց Գերագոյն Խորհրդոյ.

Գ. Ի բացակայութեան Մերոյ ի ժողովոց Գերագոյն Խորհրդոյ Տեղակալն Մեր է նախագահող Խորհրդոյն.

Դ. Ամենայն խնդիրք և գործք կրօնականք, վարչականք և տնտեսականք Մայր Աթոռոյս և եկեղեցեաց և թեմօրէից Հայաստանի և արտասահմանի, արկանին ընդ քննութեամբ յատենի Գերագոյն Խորհրդոյ և ստանան կվախճանական որոշումն և կլուծումն.

Ե. Գերագոյն Հոգևոր Խորհուրդն պարտ է, ըստ հնարաւորութեան և ներման հանգամանաց, փութացուցանել վկայմակերպումն ազգային-եկեղեցական ժողովոյ, ստանալով, ի բարեպատեհ ժամանակի, պոյլատուութիւն ի Խորհրդային Իշխանութենէ Հայաստանի:

Այսու հայրապետական կոնդակաւ Մերով հաստատեմք վՁեզ անդամս Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ և յանձնարարեմք.

Ա. Կազմակերպել վԴիւան Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ.

Բ. Կազմել վներքին հրահանգ վասն գործառնութեան և գործավարութեան Գերագոյն Խորհրդոյ.

Գ. Առնուլ և միաւորել վամենայն գործս Սինոդի և Հայրապետական Դիւանի ընդ հսկողութեամբ Գերագոյն Խորհրդոյդ և վարել վամենայն գործս յիշեալ երկուց հաստատութեանց.

Դ. Առնուլ ընդ հսկողութեամբ և տեսչութեամբ Գերագոյն Խորհրդոյդ վգանձատունն Մայր Աթոռոյս:

Օրհնելով վՁեզ, մաղթեմք ի Տեառնէ կար և վօրութիւն ձեզ ամենեցուն վասն ի կատար ածելոյ վամենայն պարտիս յաջողութեամբ՝ ի բարգաւաճումն Մայր Աթոռոյս, ի բարեկարգումն թեմական գործոց և ի պայծառութիւն Հայաստանեայց Սբ. Եկեղեցւոյս:

Ողջ լերուք, վօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և օրհնեալ ի Մէնջ: Ամէն:

ՎՇՏԱԼԻ ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 1 Յունուարի 1924 ամի,
Ըստ Տօմարիս ՌՅՀԳ (1373)
Ի Հայրապետութեան Մերոյ ԺԳ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ.
Թ. 2



# ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՀՈԳԵԼՈՒՅՍ Տ. ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԳԻՐԸ Տ. ԳԵՎՈՐԳ Ե ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ Ե.
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻՆ ՄԵՐՈՅ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*Ի. Ս. ԷՋՄԻԱԾԻՆ*

*Որդիական ակնածանօք և համբուրիւ Ս. Աջոյն.*

Վեհափառ Տէր հոգևոր,

Սրբատառ կոնդակ Հօրդ հանուրց Հայաստանեայցս, թուագրեալն ի 1 Յունուարի այսր ամի, որ առբերէր մեզ վաւերիս նորոգ հաստատութեան Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի՝ ըստ ոգւոյ և օրինաց Սրբոյ Եկեղեցւոյս մերոյ, անագան ուրեմն հասեալ ի ձեռս մեր 19 Փետրուարի, տուաք ընթեռնուլ վնա նախ յատենի թեմական ժողովոյ վիճակիս, և ապա ի տաճարի Ս. Աստուածածին եկեղեցւոյ քաղաքիս յունկն ամենայն հաւատացելոց ժողովելոց ի նմին՝ յերեկոյի Ծաղկազարդի Կիւրակէին:

Մեք և որք ընդ մեզ են՝ եղբարք, պաշտօնեայք և ժողովուրդ ուխտի Առաքելական Սրբոյ Եկեղեցւոյս, ամենեքեան շնորհ ունիմք վԱստուծոյ Ամենակալէն, վի՛ ընդ ապատութեան Հայրենեաց մերոց պարգևեաց մեզ և վապատութիւն

Եկեղեցւոյ, որպէսզի տացի մեզ յայսմհետէ վարիլ բնիկ օրինօք և կանոնիւք ազգի մերոյ և կրօնի, որպէս սահմանադրեցին ի դարս անցեալ ժամանակաց Հայրապետք և Հարք, Առաջնորդք և Վարդապետք Սրբոյ Հաւատոյս, և որպէս արժան համարեսցին տնօրինել Գլուխդ Սրբոյ Եկեղեցւոյս մերոյ և ժողովք ուխտի նորին, ըստ պահանջելոյ ժողովրդեան մերոյ:

Ակն ունիմք կի ի շնորհս ջանից Վեհիդ մի յապաղեսցի և գումարումն ընդհանրական ժողովոյ, որ վերստին կանգնեալ ուղղեսցէ զցանկ հայրենի աւանդից և հաստատեսցէ զշինուած օրինաց Հայաստանեայց սուրբ և ուղղափառ Եկեղեցւոյ, ընդ հովանեաւ մեծի և պատուական Հայրապետիդ մերոյ:

Հայցելով զօրհնութիւն Հօրդ Սրբոյ ի վերայ ամենայն որդւոց քոց հարազատից, ժողովրդեան Հայոց, որք յիմում վիճակի աստ են, և յիմ իսկ, մնամ

ի շնորհաց Տեառն մերոյ և Փրկչին և ըստ

հաճութեան Սրբական Հայրապետիդ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԵԳԻՊՏՈՍԻ
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱԿԱԴԵՄԻԱ

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այսու հաղորդագրությամբ հաստատում ենք Մայր Աթոռիս Դիվանի 6 դեկտեմբեր 1983 թվակիր «Հաղորդագրություն»-ը՝ ի մասին Քննիչ Հանձնաժողովի տեղեկագրի՝ Երուսաղեմի հայոց պատրիարքության վերջին տարիների կալվածոց վաճառքի և դրամական գործառնությանց վերաբերյալ:

Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը 1984 թ. հունիսի 24-ի իր նիստում մի անգամ ևս քննության առնելով Քննիչ Հանձնաժողովի 31 օգոստոս 1983 թվակիր տեղեկագիրը և Երուսաղեմի հայոց պատրիարքության ներկայացրած 18 նոյեմբեր 1983 թվակիր բացատրագիրը, ինչպես և նույն Քննիչ Հանձնաժողովի 3 ապրիլ 1984 թվակիր պատասխան վեկուցագիրը, եկավ այն եզրակացության, որ վերջին տարիների ընթացքում Երուսաղեմի հայոց պատրիարքության կալվածների վաճառքի ու այլ ֆինանսական գործարքների ընթացքում կատարվել են անկանոնություններ կարևոր գումարների հասնող, ըստ ներկայացված տվյալների:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը խնդրեց Վեհափառ Հայրապետից, որ կոչ ուղղի Երուսաղեմի հայոց պատրիարքին՝ առաջադրանքով, որ անհապաղ հրավիրի միաբանական ընդհանուր ժողով մասնակցությամբ բոլոր միաբանների, Ս. Աթոռից ներս և արտաքո Աթոռ պաշտոնավարող, որոնք ծանոթանալով Քննիչ Հանձնաժողովի և պատրիարքության ներկայացրած բոլոր վերոհիշյալ փաստաթղթերին, առարկայորեն և բարեխղճությամբ քննեն դրանք, ստուգեն խնդրո առարկա գործարքները և համաձայն միաբանության կանոնագրության տրամադրությունների, ճշտեն պատասխանատվությունները և ի հարկին տնօրինեն պարտն ու պատշաճը, ի վերականգնումն Երուսաղեմի հայոց պատրիարքության Աթոռի հեղինակության և ի մխիթարություն համայն հայ հավատացյալ ժողովրդի:

Վեհափառ Հայրապետը հաստատեց և ընթացք տվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն առաջադրանքին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
12 սեպտեմբեր 1984 թ.

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 17—29 օրերին Մայր Աթոռում գումարվեց Հայ Եկեղեցու կանոնադրության հանձնաժողովը՝ շարունակելու 1981 թվականի հոկտեմբերին սկսված աշխատանքները:

Կանոնադրության հանձնաժողովի նոր կազմը բաղկացած էր հետևյալ անձերից.

1. Ամենապատիվ Տ. Շնորհք Սրբազան Պատրիարք.
2. Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան.
3. Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան.
4. Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյան.
5. Տ. Մեսրոպ ծայրագույն վարդապետ Գրիգորյան:

Հանձնաժողովը ունեցավ տասնմեկ նիստ, որոնց ընթացքում կազմվեց 84 հոդվածներից բաղկացած կանոնադրության սկզբնական նախագիծ:

Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ հանձնաժողովը որոշեց առաջիկա տարվա գարնանը կրկին հավաքվել՝ իր ավարտին հասցնելու համար սկսված աշխատանքը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
10 հոկտեմբեր 1984 թ.



# Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 13-ին, ուրբաթ օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ժամանում Թուրքիայի հայոց Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը:

Նույն օրը պատրիարք հոր հետ Մայր Աթոռ է ժամանում գերաշնորհ Տ. Տիրան արքեպ. Ներսոյանը:

Պատրիարք սրբալան հորը և Տ. Տիրան սրբազանին Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորում է Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Տ. Ներսես եպս. Պոլապայանի:

Մայր տաճարի շքամուտքի առաջ, Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի գլխավորությամբ, եկեղեցական թափորը «Հրաշափառ» շարական-երգով Ամենապատիվ սրբազան հորն առաջնորդում է Մայր տաճար, ուր Իջման Ս. Սեղանի առաջ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը ողջունում է մեծապատիվ հյուրերին հետևյալ խոսքերով.

«Թույլ տվեք այս ուրախ պահին, հանուն Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռիս միաբանության, ուսանողության և ներկա հավատացյալների, սրտագինս ողջունել Ձեզ, սրբազան պատրիարք և գերաշնորհ Տ. Տիրան արքեպ. Ներսոյան, և բարի գալուստ մաղթել ի Ս. Էջմիածին:

Սրբազան պատրիարք, շատ անգամներ եք Դուք եկել Մայր Աթոռ Ս. Էջմիածին ու ամեն անգամ Ձեր բարի գալստյամբ ուրախություն և ոգևորություն եք պարգևել մեզ բոլորիս: Դուք այժմ գտնվում եք այն եկեղեցում, որն ամենից նվիրականն է և մայրը Հայաստանյայց բոլոր եկեղեցիների, քանի որ այստեղ իջավ Միածինը և հաստատեց այս եկեղեցին Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռքով:

Ես սրտանց մաղթում եմ, որ Աստված Ձեր այս բարի այցը օրհնությամբ պսակի: Ձեզ ցանկանում եմ քաջառողջություն և արևշատություն, որպեսզի Ձեր ողջ ժողովուրդը միշտ հոգևոր մխիթարություն ստանա Ձեր Ամենապատվությունից»:

Այնուհետև պատասխան շնորհակալական խոսք է ասում Ամեն. Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը. «Ինձի համար մեծ երջանկություն է անգամ մը ևս գտնվիլ այս նվիրական, սրբազան հարկի ներքև: Ինձի համար նաև մեծ երջանկություն է, որ կաշխատինք Ս. Գրիգոր Լուսավորչի և Ս. Մեսրոպի ջահը վառ պահել մեր հավատացյալներու հոգիներուն մեջ: Մեր ժողովուրդը ոչ միայն հավատարիմ քաղաքացին է իր երկրին և իր քաղաքացիական պարտականությունները լիովին կկատարե այնտեղ, այլ նաև հոգևոր ձևով սրտանց կապված է այս վերին և գերագույն կեդրոնին, ուրկե քրիստոնեական հավատքը ծագեցավ Հայաստան աշխարհին: Հետևաբար ես կբերեմ ձեր եղբայրներուն և կրոնակիցներուն ու ամենքիդ սիրալիր ողջույններ:

Այս սրբատաշ քարերեն ուղղակի կորություն կներարկվի մեր բնության մեջ, և մենք երջանկությամբ ու նվիրումով կհամբուրենք այս սրբատաշ քարերը և այս Սուրբ Խաչը: Այո՛, մենք այս հարկի տակ իրապես կզգանք մշտնջենական ներկայությունը աստվածային Աջին»:

Պատրիարք սրբազանը հոգեկան գոհունակությամբ է նշում, որ այս ուրախ առիթով իր հետ Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելել Տ. Տիրան արքեպ. Ներսոյանը:

Իր խոսքի վերջում Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոսը մաղթում է, որ Աստուծո պահպանիչ Աջը միշտ անսասան պահի Հայ Առաքելական Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Այնուհետև իր մաղթանքն է հղում Հայոց Հայրապետին՝ ցանկանալով Նրան հաջողություններ, արևշատություն, որպեսզի նա իմաստությամբ առաջնորդի Հայաստանյայց Եկեղեցին:

Ապա պատրիարք սրբազան հայրը հանդիսավոր թափորով առաջնորդվում է Վեհարան: Վեհարանի մուտքի մոտ Վեհափառ Հայրապետը ընդունում է նրան եղբայրական ջերմ սիրով ու ողջագուրումով:



# ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ «ՎԱՐԱԳԱ Ս. ԽԱՉԻ» ՏՈՆԻՆ (30 սեպտեմբեր 1984 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն»:

Ամենեն առաջ, սիրելի և հավատացյալ ժողովուրդ, պարտականություն ունիմ հաղորդելու ձեզի ձեր եղբայրներու և քույրերու ողջույնները, որոնք կբնակին Թուրքիա:

Ամբողջ սփյուռքի ցրված հայությունը կներկայացնե մեկ մարմին և մեկ ժողովուրդ: Հետևաբար ամենքեն կբերեմ իրենց սերը, իրենց եղբայրությունը և ամենաջերմ ողջույնները: Այն հայերը, որոնք կապրին Պոլսո մեջ, բարեբախտ են և լավ պայմաններու ներքև կգտնվին: Ու անոնց բոլորի սիրտերուն մեջ ևս կբաբախե հայու սիրտը և հայու սերը:

Բախտի և մեր ճակատագրի բերմամբ ցրված ենք, ինչպես դուք կըսեք, աշխարհով մեկ: Այնուհանդերձ իջման այս նվիրական և սրբական տեղը մեր ազգի միության հոգևոր կեդրոնն է: Ամեն կողմե՝ Ամերիկաներեն, Եվրոպայեն, Միջին Արևելքեն, հայրենիքեն և այս Մեծ Միության բոլոր անկյուններեն կուգա մեր ժողովուրդը այստեղ՝ միանալու, ինքզինքը գտնելու և զԱստված գըտնելու, որովհետև Աստված իջեր է այստեղ մեր ժողովուրդի հավատքովը, Լուսավորչի հավատքովը: Մենք կուգանք այստեղ գտնելու համար մեր հավատքը, մեր Աստվածը, մեր Եկեղեցին, մեր միությունը, մեր կրոնակցությունը: Հետևաբար փառք կուտանք Աստուծո ամենեն առաջ և ամենեն ավելի այս սրբավնասուրբ Էջմիածինը, հայ ժողովուրդին իբրև կեդրոն, իբրև նվիրական սրբավայր, մեզի վերապահած ըլլալուն համար:

Այսօր տոն է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո, տոն է Վարագա Խաչի, և այս առիթով պիտի ուզեի օրվա շարականեն նախադասություն մը առնել՝ կերպով մը իբրև աղոթք, իբրև մաղթանք: Օրվա շարականը հետևյալը կըսե՝ ակնարկելով Վարագա Խաչի երևալուն. «Երևիլ սրբոյ նշանիս արժանի արա զծառայս քո վերստին նորոգման»: Երբ այդ նշանը երևի, թող արժանի ընե իր ծառաները վերստին նորոգման: Եվ այդպես, սիրելի և հավատացյալ ժողովուրդ, տարօրինակ զուգորդում մը, ուր որ խաչը կերևի՝ անոր կհաջորդե վերանորոգություն: Ամենեն առաջ անիկա հայտնվեցավ մեր Փրկչի կյանքին մեջ: Խաչվեցավ Անիկա, խաչը կանգնեցավ ի Գողգոթա, և աշխարհի չափա-

նիշներով պարտվեցավ մեր Տերը իր առաքելության մեջ: Աշխարհի չափանիշներով Անիկա կորսնցուց իր թագը, բայց ի՞նչ հրաշալի հաղթություն հաջորդեց՝ անոր՝ Հարությունը նույն ինքն մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի: Ատով հաստատվեցավ, թե խաչին կհաջորդե վերանորոգությունը: Եվ այդպես եղավ նաև առաքյալներու ամբողջ կյանքի ընթացքին: Անոնք խաչվեցան, չարչարվեցան, բայց հակառակ այդ բոլորին, Ավետարանի լույսը ամեն կողմ տարածվեցավ, և անոնք, որոնք երջանկությունն ունեցան այդ Ավետարանի լույսով լուսավորվելու, նորոգվեցան հոգիով, նորոգվեցան իրենց ամբողջ էությամբ:

Այդպես պատահեցավ նաև մեր ամբողջ պատմության ընթացքին. ի՞նչ չարչարանքներ չկրեց մեր հավատքին հայրը՝ Գրիգոր Լուսավորիչ: Անմեղ կույսեր, Հռիփսիմյանց կույսեր ոտղակի խաչվեցան: Այնուհանդերձ հրաշալի հաղթություն հաջորդեց այս խաչելության: Ելավ Լուսավորիչը Խոր Վիրապեն և հայ ժողովուրդը վերանորոգեց Ավետարանի լույսով: Եվ այսպես եղած է մեր ամբողջ պատմության ընթացքին:

Յոթներորդ դարում հանկարծ Հայաստանի հողին վրա իրական խաչի նշանը կերևի Վարագա լեռան վրա: Եվ մեր ժողովուրդը կուգա ականատես ըլլալու և կհաստատե այն: Այդ խաչին հաջորդեցին հալածանքներ, նեղություններ, հայ նախարարներու անգիտություն և այլ դժվարություններ: Բայց վերանորոգվեցավ կրկին մեր ժողովուրդը Բագրատունիներով, վերանորոգվեցավ Ռուբինյանց արքաներով և մշակույթով:

Այդ նույն բանը պատահեցավ նաև առաջին աշխարհամարտին: Ի՞նչ չարչարանքներ բաժին դարձան մեր ժողովուրդին: Նահատակվեցավ ան մեր Փրկչին պես, այնուհանդերձ հաջորդեց անոր վերանորոգումը և վերելքը: Այսօր ամբողջ Հայաստանը և Սփյուռքը վերելքի, վերանորոգության ճամփուն վրա են: Վերաշինվեցավ մեր հայրենիքը, վերանորոգվեցավ հայ ժողովուրդի կյանքը:

Այսպես պատահեցավ նաև վերջին համաշխարհային պատերազմին: Քանի՞-քանի՞ հազարներ ձեր հարազատներեն իրենց արյունը թափեցին հայրենական պատերազմին: Այնուհանդերձ անոնց արյունը կերպով մը վերանորոգություն եղավ մեր ժողովուրդին համար: Ավելի հզոր դուրս եկավ անիկա պատերազմեն և այսօր ավելի հզոր վիճակի մեջ անիկա կվերանորոգե և կզարգացնե իր տնտեսությունը, իր մշակույթը, իր քաղաքներն ու գյուղերը:

Այդ վերանորոգումը տեղի ունեցավ նաև Հայ Եկեղեցիի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պարագային: Ամենքն ալ գիտեն, թե անցյալի մեջ անփառունակ վիճակ մը կներկայացներ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Սակայն Աստված մեզի հարոյց նոր Հայրապետ մը, շնորհալի Հայրապետ մը: Այսօր մենք այդ շնորհալի, այդ պատվական Հայրապետին գահակալության 29-րդ տարեդարձը կկատարենք: 29 տարիներե ի վեր Էջմիածինը վերանորոգություններով շենցավ, և այսօր ամենքիս հպարտության առարկան է: Այդ բոլորը կատարվեցավ Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Սրբազնագույն կաթողիկոսի օրոք: Ոչ միայն իբրև արտաքին երևույթ, ոչ միայն իբրև շենք, այլ նաև իբրև հոգևոր կառույց վերանորոգության ենթարկվեցավ: Վերանորոգություն հոգևոր ճեմարանի, միաբանության, կրոնական կյանքի: Հայ ժողովուրդը տեսավ, որ իր հոգևոր կեդրոնը կգտնվի շինարար, վերանորոգող Հայրապետի մը խնամքին տակ: Ոչ միայն Էջմիածինը վերանորոգվեցավ, այլ նաև վերանորոգվեցան հարաբերությունները սփյուռքի և հայրենիքի, հայ ժողովուրդի բոլոր հատվածներու և Մայր Աթոռի միջև:

Մեր Վեհափառ Հայրապետը ոսկի օղակ մը եղավ, որ կապեց արտասահմանի հայությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո այս կեդրոնին: Իբ-

րև քաջ Հովվապետ, երկրե երկիր, աշխարհե աշխարհ եղավ բազմիցս՝ փընտրելու իր կորուսյալ ոչխարները: Գտավ զանոնք, իր կուրծքին սեղմեց և բերավ այստեղ եթե ոչ ֆիզիկապես, գոնե հոգիով ու սրտով: Հետևաբար վերանորոգություն կատարվեցավ նաև այս տեսակետեն:

Նույնը կարող է պատահիլ, սիրելի հավատացյալ ժողովուրդ, ձեզմե ամեն մեկուն կյանքին մեջ: Դուք ալ ձեր կյանքին մեջ կարող եք ունենալ խաչի խորհուրդը: Ի՞նչ է խաչի խորհուրդը: Ձեզմե յուրաքանչյուրը կարող է կորսնցնել իր հարպատը. խաչ մըն է ատիկա ամեն մեկ ընտանիքի համար, բայց միաժամանակ առիթ մը հավատքի վերանորոգության: Այդ հարպատը թեև հող էր և հող դարձավ, այնուհանդերձ իսպառ չկորսվեցավ, այլ անցավ գնաց՝ հավիտենականության վիճակի մը տիրանալու համար: Մեզմե ամեն մեկը անհատական և ընտանեկան դժվարություններ և նեղություններ կարող է ունենալ: Ատոնք պիտի չվհատեցնեն զմեզ, ատոնք զմեզ անհավատ պիտի չդարձնեն, ընդհակառակն, մեկնակետ պիտի ըլլան նորոգության ճամփուն մեջ, ուր պիտի մտնենք շատ ավելի հավատավոր, շատ ավելի կատարյալ կերպով:

Հետևաբար մենք կաղոթենք, որ Տերը Իր խաղաղությունը պարգևե ամբողջ աշխարհին, ինչպես նաև մեզմե ամեն մեկուս: Թող Աստված համայն հայ ժողովուրդը վերանորոգության, բարգավաճման մեջ պահե:

Միաժամանակ մեր սիրելի Հայրապետին գահակալության տարեդարձին առիթով մենք Աստուծո գոհություն կմատուցանենք մեր Վեհափառ Հայրապետը մեզի շնորհած ըլլալուն համար:

Կաղոթենք և կմաղթենք, որ Տերը Իրեն շնորհե տակավին երկար տարիներ, որպեսզի Ան արդյունավորությամբ շարունակե Իր վերանորոգչական աշխատանքը հայ ժողովուրդի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո մեջ:





# ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ Ս. ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔ

Աշնան գեղեցիկ և պաղ լուսաբաց էր Գեղարդի ձորում: Գիշերը մոտենում էր իր ավարտին: Մթնշաղի վերջին հետքերը կամաց-կամաց անհետանում էին, և սկսում էին ավելի հստակ երևալ իրենց սրածայր կատարները դեպի երկինք մխրճած շրջակա լեռների հսկա կանգվածները: Վեհապանծ այս լեռների հետ ձուլվել է հայ մարդու հոգուն հարազատ, մեր հոգևոր նվիրական հուշարձաններից մեկը՝ քարեղեն աղոթք դարձած Գեղարդա վանքը: Բնության այդ գողտրիկ անկյունը թվում է, թե արարչագործության առաջին իսկ օրվանից մնացել է անփոփոխ և կուսական:

Առավոտյան ժամը վեցն է: Միաբանությունը դեռ քնած է: Սովորականի պես վանքի պահակը գործունյա քայլերով մոտենում է վանքի գլխավոր դարպասին և բացում այն: Ամեն օր, երկու անգամ, դանդաղ, հանդիսավորապես և ճռնչյունով բացվում են այդ դարպասի դռները, և ամեն անգամ այս խորհրդավոր արարողությունը կրկնվելիս կարծես քո առջև բացվում են մի ամբողջ ժողովրդի պատմության դռները, որոնց ետևում քեզ թվում է, թե տեսնում ես քո ժողովրդի եռամեծ բոլոր հայրերին և հայրապետներին, հոգնած, բայց ահռելի ժայռաբեկորը իր կամքին ենթարկած Գալձակ ճարտարապետին...: Եվ առաջին հայացքից հասարակ և սովորական թվացող այս երևույթը ստիպում է քեզ խորհրդածել, իմաստավորել զգացումդ, ստիպում է ոչ միայն վերապրել անցյալը, այլ նաև տեսնել և զգալ երբեմնի տառապած ժողովրդիդ հաղթական ներկան և պայծառ հեռանկարներով լի ապագան:

«Ի ծագել լուսոյ առաւօտուս» միաբանական կյանքը մտնում է իր հունի մեջ: Զանգերը ավետում են առավոտյան աղոթքի ժամը:

Այսօր սեպտեմբերի 25-ն է, երեքշաբթի, հիշատակի օրը «Սրբոց Կուսանացն Փեփրոնեայ, Մարիանեայ, և Շուշանայ՝ դստերն Մեծին Վարդանայ»: Այսօր միաժամանակ վանքում կրկնապատիկ ուրախ, տոնական օր է. պաշտոնական այցելությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գտնվող Կ. Պոլսի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը ուխտի է գալու Գեղարդա վանք:

Առավոտյան ժամերգությունը վաղուց արդեն ավարտվել է, և հոգևոր դասը պատրաստվում է ընդունելու Կ. Պոլսի հայոց պատրիարքին:

Առավոտյան ժամը 10.30-ին ժամանում է Տ. Շնորհք սրբազան պատրիարքը՝ ուղեկցությամբ շուրջ 40 հոգուց բաղկացած պոլսահայ ուխտավորների:

Հնչում են վանքի զանգակները, և եկեղեցական թափորը, սրբազան պատրիարքի գլխավորությամբ, հանդիսավոր մուտք է գործում եկեղեցի: Եկեղեցին լեփ-լեցուն է հեռավոր բնակավայրերից եկած հավատացյալներով: Նրանցից շատերը չկարողանալով ներս մտնել՝ պատարագի սրբազան արարողությանը հետևում են եկեղեցուց դուրս՝ վանքի շրջափակում:

Աղոթքի և ուխտի ժամ է:

Պատրիարք հոր «Հայր մեր»-ով սկսվում է պատարագը: Օրվա պատարագիչն է Էջմիածնի Ս. Շողակաթ եկեղեցու վանահայր Տ. Ղևոնդ քահանա Հարությունյանը, որը Ս. Գեղարդա վանքի վանահոր եղբայրական հրավերով եկել էր Ս. Գեղարդ և սիրով հանձն էր առել մատուցել սուրբ պատարագ: Եկեղեցու աջակողմյան դասում նախապես պատրաստված պատրիարքական աթոռին բազմած՝ սուրբ պատարագի ընթացքին է հետևում Նորին Ամենապատվությունը: Նրա շրջանքները մշտապես աղոթք են մրմնջում: անտարակույս այդ աղոթքը աշխարհի խաղաղության և Հայաստանյայց Առաքելական սուրբ Եկեղեցու անսասանության համար է: Սրբական տաճարում հավաքված խուռներամ հավատացյալները նույնպես աղոթում են:

Շատերի աչքերը խոնավանում են, երբ լսվում է հանրաճանաչ երգչուհի Լուսինե Զաքարյանի սրտահույզ «Սուրբ, Սուրբ»-ը:

Հայոց պատարագի հոգեպարար արարողությունը շարունակվում է: «Հայր մեր»-ից առաջ Ս. Գեղարդա վանքի վանահայր Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը սուրբ սեղան բարձրանալով՝ դիմում է սրբական հորը բարիգալստյան հետևյալ խոսքով.

«Ամենապատիվ և շատ սիրելի սրբական Պատրիարք հայր.

թյուն ի փառս և ի շինություն մեր սուրբ Եկեղեցու և մխիթարություն Ձեր տիրախնամ հոտի:

Սրբական Պատրիարք հայր, երջանիկ ենք մենք բոլորս, քանզի վերջին յոթ տարիների ընթացքում Ձեր երրորդ ուխտագնացությունն է այստեղ՝ Ս. Գեղարդա վանք: Թույլ տվեք ասել, որ մեր ամեն մի հանդիպումը Ձերդ Ամենապատվության հետ հարստացնում է մեզ, և մենք դրանից հետո հոգեպես ավելի զորացած՝ լծվում ենք մեր հոգևոր գործին: Դուք,

Ամենապատիվ պատրիարք սրբական հայրը Ս. Գեղարդի վանքում

Այսօր մեզ համար տոն է, քանզի մեր մեջ ունենք Հայաստանյայց Առաքելական սուրբ Եկեղեցու ականավոր հոգևորականներից մեկին: Թույլ տվեք, սրբական Պատրիարք հայր, հանուն մեր միաբանության, աշխարհական պաշտոնեության, ինչպես նաև մեր վանքը ուխտի եկող տասնյակ հազարավոր հավատացյալների, որոնք գալիս են հինավուրց այս սրբավայրը կԱստված գտնելու՝ ողջունել Ձեզ:

Ողջունում և բարի գալուստ եմ մաղթում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռներից մեկի՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքական պատմական Աթոռի գահակալիդ և ցանկանում քաջառողջություն, արևշատություն և երջանիկ պատրիարքու-

սրբական հայր, այն անձն եք, որին և՛ հայրենիքում, և՛ սփյուռքում շատ լավ են ճանաչում որպես հավատքի և տեսիլքի մարդ:

Մեկանից ո՞վ կարող է անտարբեր մնալ և չոգևորվել Ձեր հոգու և մտքի անգնահատելի գանձերով, որոնք Ձեր գրչի միջոցով դարձել են հոգևոր դասեր հայ հոգևորականաց և ժողովրդի համար, դասեր, որոնց սերտումով է՛լ ավելի ենք մոտենում Աստծուն: Ձերդ Սրբությունի պատկերացմամբ՝ նյութական եկեղեցին կենդանի հավատքն է, որի տիպար օրինակը Դուք եք՝ Ձեր ամենօրյա աշխատանքով և հոգևոր առաքելությամբ: Որպես Կ. Պոլսի հայոց պատրիարքական պատմական Աթոռի գահակալ և Տիրոջ հավատարիմ աշակերտ, արել ու անում եք հնարավոր ա-

մեն բան՝ ավետարանական լույսով ջերմացնելու համար հայ հավատացյալների հոգիները:

Սրբական հայր, մեկ համար այնքան նվիրական ու հանդիսավոր այս օրը ես չեմ կարող իմ որդիական հավատարմությունը և անմնացորդ սերը չհայտնել Ամենայն Հայոց Հայրապետին, որը ընձեռեց մեկ այս շնորհն ու պատիվը Ձերդ Ամենապատվության հետ հանդիպելու, միասին աղոթելու այստեղ, այս հնավանդ վանքում: Որդիական շնորհակալություն նաև այն ամենի համար, որ Նորին Սուրբ Օծությունը վերջին երկու տասնամյակների ընթացքում արել և անում է՝ է՛լ ավելի շենացնելու պատմական այս սուրբ տաճարը:

Աղոթենք, որ տիեզերքի Արարիչը շեն ու պայծառ պահի մեր սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, նվիրապետական մեր մյուս Աթոռների հետ միասին: Աղոթենք, որ Աստված շատ երկար, արևոտ ու քաջառողջ տարիներ պարգևի Ձերդ Ամենապատվությանը ի մխիթարություն Ձեր պատվական հոտի և հուրախություն բոլորիս:

Բարով էք եկել, սրբազան Պատրիարք հայր, թույլ տվեք խոնարհ աջահամբույրով խնդրել Ձեր օրհնությունը մեր միաբանությանը և այստեղ ներկա ժողովրդին»:

Արժանապատիվ վանահոր բարիգալստյան սույն խոսքերից հետո, Նորին Ամենապատվությունը սուրբ խորան բարձրանալով՝ նախ շնորհակալություն է հայտնում վանքի վանահորը նրա սրտառուչ խոսքերի համար, օրհնում նրան և ապա դառնալով ժողովրդին՝ խոսում է աղոթքի կարևորության մասին, շեշտելով մանավանդ այն բոլորանվեր սերն ու պաշտամունքը, որ պետք է ունենա յուրաքանչյուր հայ հավատացյալ հանդեպ Հայաստանյայց Առաքելական սուրբ Եկեղեցու:

Տ. Շնորհք Պատրիարքը, վեր հանելով «կԱստված գտնելու» գաղափարը, ասում է. «...իրապես այս այն սրբական վայրն է, ուր ճշմարիտ հավատքով ու աղոթքով մենք կը-գտնենք կԱստված»: Նա հատուկ կարևորությամբ խոսում է Ամենայն Հայոց Հայրապետի եկեղեցաշեն գործունեության մասին՝ օրինակ բերելով սուրբ Գեղարդա վանքը, որն այսօր իր ամբողջ գեղեցկությամբ և բարեկարգ վիճակով ներկայանում է հավատացյալներին և այցելուներին: Ապա սրբազան հայրը, շարունակելով իր խոսքը, նշում է.

«Եղբայրական իմ անկեղծ ուրախությունը կհայտնեմ Նորին Սուրբ Օծության, որ լավագույն ընտրությունը կատարելով՝ արժանավոր վանահայրով մը օժտված է այս վանքը: Տ. Եղիշե հայրը ես վաղուց կճանչնամ և գիտեմ վինքը իր մտավոր և վարչական կարողություններով, որպես ավանդապահ սպասավոր մը Հայ Եկեղեցվո:

Այս վերջին տարիներուն, երբ կայցելեմ այս վանքը, բավական ուրախալի նորություններու կհանդիպիմ: Առավել ոգևորությամբ նույնը կցանկամ կրկնել մեր մայր հայրենիքի համար, որ օրեօր կշեննա, կծաղկի, կպայծառանա և կկորանա:

Այստեղ, հավատքի ոգեհարյուրամյա այս սուրբ տաճարին մեջ, հոգեբուխ աղոթքով և անկեղծ նվիրումով պետք է մաքրենք մեր հոգիները և գտնենք երկնքի ճանապարհը»:

Այդ օրը սրբազան հայրը ներկա հավատացյալների ցանկությամբ խոստովանեցնում է բոլորին, որոնք սուրբ հաղորդությունից հետո աջահամբույրով հրաժեշտ են առնում Նորին Ամենապատվությունից:

Հավարտ պատարագի տեղի է ունենում հյուրասիրություն վանատանը, որտեղ Պատրիարք հայրը ընդունում է վանքի միաբաներին վանահոր գլխավորությամբ և իր օրհնությունն է տալիս բոլորին՝ պատվիրելով հավատարիմ մնալ մեր սուրբ Եկեղեցու կարգին և ավանդությանը:

ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԱ ՄԱԼՅԱՆ





## ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 10-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված հոգևոր ճեմարանի 1983—1984 ուսումնական տարվա վերաբացման: Վեհափառ Հայրապետի կողքին, նախագահական սեղանի շուրջ, տեղ էին գրավել Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, Տ. Ներսես եպս. Պողապալյանը և հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը:

Հանդիսությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ճեմարանի հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և մայրավանքի պաշտոնեությունը:

Հանդիսությունը սկսվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով: Այնուհետև հնչում է Սովետական Հայաստանի պետական հիմնը: Ապա հոգևոր ճեմարանի սաները կատարում են ճեմարանի քայլերգը, որից հետո ճեմարանի ծիսագիտության դասախոս Տ. Արտակ քհն. Սիմոնյանը Ս. Ավետարանից ընթերցում է «Սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ, 4—9): Ընթերցումից հետո ճեմարանի սաները, ղեկավարությամբ ճեմարանի երաժշտության դասախոս Հայկ Ֆրունձյանի, կատարում են «Աշակերտք Քրիստոսի» ու «Որք Զարդարեցին» շարականները: Ավարտական լսարանի ուսանող Սամվել Կճոյանը ընթերցում է Նարեկից՝ Ս. Հոգուն ուղղված աղոթք-աղերսը (Բան ԼԴ):

Հանդիսությանը բացման խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը: Իր խոսքի սկզբում Հայկազուն վարդապետը նշում է. «Տիեզերքի անհունության մեջ կարծեք ժամանակ գոյություն չունի, միայն աշխատանքը, գործն է, որ առիթ է տալիս այդ անհունությունը բաժանելու դարերի, տարիների: Մեր այս շրջափակում այդպիսի գործերի արձագանքները տակավին հնչում են, սկսած Ս. Գրիգոր Լուսավորչից, որը մանուկներ էր հավաքում՝ նրանց դաստիարակելու քրիստոնեական ոգով, կամ Մաշտոցից, որը հայացնում էր քրիստոնեությունը, և այդպես, դարերի միջից, մինչև Գևորգյան ճեմարան և մեր հոգևոր ճեմարանը»:

Շարունակելով իր խոսքը, փոխտեսուչ հայր սուրբը ոգևորությամբ է նշում այն իրողությունը, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «հոգևոր ճեմարանը արդեն 40 տարեկան է, և այս տարիների ընթացքում պատրաստվել են բազում եկեղեցականներ, որոնցից շատերը այսօր շրջապատել են մեր սիրելի Վեհափառ Հայրապետին, լինեն նրանք եպիսկոպոսներ, վարդապետներ, թե քահանաներ»: Իր խոսքի վերջում Տ. Հայկազուն հայր սուրբը իր շնորհակալական խոսքն է ուղղում Հայոց Հայ-

բապետին դեպի ճեմարանն ունեցած Նրա հայրական ջերմ հոգատարության համար և Հեմարանի տեսչության անունից վստահեցնում Նորին Սրբությանը՝ «... որ տեսչության և դասախոսական կազմի համատեղ ջանքերով կարելի պիտի լինի 1984—1985 ուսումնական տարեշրջանը, որը հոբելյանական տարի է, դարձնել արդյունավետ»:

Այնուհետև Նորին Սրբությունը իր հայրապետական ողջույնները և բարի մաղթանքներն է բաշխում հոգևոր ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին և ուսանողությանը: Հայոց Հայրապետը սրտի բերկրանքով է նշում այն իրողությունը, որ «վերջին 30--40 տարիների ընթացքում հոգևոր ճեմարանը կարևոր չափով հոգևոր ապասավորներ պատրաստեց: Այսօր մեր ներքին թեմերում, գրեթե ամեն տեղ բոլոր ծառայողները հոգևոր ճեմարանում կրթություն ստացած հոգևորականներ են: Սա նշանակալից երևույթ է: Արտասահմանում նույնպես ունենք բավական էջմիածնական սաներ, որոնք այսօր պատվավոր գործ են կատարում: Ճիշտ է, նրանց թիվը այնքան մեծ չէ, բայց հետևիետե մենք պետք է աշխատենք նոր սերունդներ պատրաստել, որովհետև կարիքը մեծ է, առավել չափով՝ արտասահմանում»:

Ապա իր խոսքն ուղղելով հոգևոր ճեմարանի սաներին Վեհափառ Հայրապետը ասում է. «Քիչ առաջ, սիրելի ուսանողներ, դուք լսեցիք Ս. Ավետարանից ընթերցում՝ Հիսուսի նշանավոր «Սերմնացանի առակը»: Այս առակը համարվում է Ավետարանի մարգարիտ առակներից մեկը, որը պարունակում է իր մեջ հավիտենական ճշմարտություն ոչ միայն հոգևոր կյանքի համար, այլ մարդկային աշխարհի համար: Հիսուսի առակը բնության օրենքներից վերցված մի պարզ, հստակ, հասկանալի առակ է, բայց Հիսուսի հանճարը այս դեպքում երևում է նրանում, որ նա այս առակը պատմում է՝ փոխադրելով այն մարդկային կյանքի պայմանների, մարդկային իմացական և հոգեկան աշխարհի վրա: Եվ իրոք, այս մեկնաբանությամբ, այս առակը տիեզերական և հավիտենական նշանակություն է ստանում:

Հիմա դուք, սիրելի սաներ, հենց այն հողն եք, որտեղ սերմնացանը իր սերմերն է արձակում: Դուք նույնպես կարող եք լինել ապառաժանման, և սերմերը ձեր հոգու մեջ կարող են արդյունք չտալ: Բայց ձեվանից նրանք, ովքեր պատրաստ են մաքուր սրտով, պայծառ մտքով ընդունելու այդ սերմերը, այսինքն՝ այն ուսմունքը, որ ձեվ ավանդվում է այս հարկի տակ ձեր դասախոսների կողմից, կարող են մեկի տեղ բազմապատիկ արդյունք տալ: Մարդկային կյանքի մեջ էլ, բոլոր ասպարեզներում, ճշմարիտ է այս, բայց հատկապես կարևոր է այդ և իմաստալից ձեվ համար, եկեղեցական հոգևոր կյանքի ասպարեզում»:

Իր խոսքի վերջում Նորին Սրբությունը հայրական պատգամով դիմում է ուսանողությանը. «Սիրելի սաներ, դուք մեր Եկեղեցու և հավատավոր ժողովրդի ժառանգորդներն եք, և ձեր ուսերի վրա պետք է ծանրանա ճանապարհը շարունակելու մեր նախնիների փորձը, միշտ ամուր, անշարժ, կենդանի պահելու համար մեր Ս. Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և մեր ժողովուրդը իր հոգևոր վերապարթոնքի և վերածննդի ճանապարհին:

Սուրբ Հոգին թող ձեվ ներշնչարան դառնա, և դուք սկսեք ձեր դասերը այս համոզումով, այս հավատքով և ապագայի այս երազանքներով:

Ձեվ մաղթում եմ հաջողություն և բերում իմ հայրական օրհնությունները»:

Հոգևոր ճեմարանի վերաբացման սույն հանդիսությունը ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր»-ով և Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:



Մի պահ ձեռնադրության արարողությունից

## ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Հոկտեմբերի 14-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում տեղի է ունենում եպիսկոպոսական ձեռնադրություն:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը եպիսկոպոս է ձեռնադրում Կանադայի հայոց առաջնորդ Տ. Վազգեն ծ. վրդ. Քեշիշյանին և Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև ծ. վրդ. Ղարիբյանին:

Հոկտեմբերի 13-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում, ըստ Հայաստանյայց Եկեղեցու ավանդության կատարվում է նորընծաների «ընտրութիւն և ուխտադրութիւն»:

Իշման Ս. Սեղանի առաջ Տ. Վազգեն և Տ. Տաթև ծայրագույն վարդապետները ուխտում են «հաւատարիմ լինել Սրբոյ Էջմիածնի մինչեւ վվախճան կենաց իւրեանց, կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքո իշխանութեան և հրամանաց Սրբոյ Կաթուղիկէ Մայր Աթոռոյս»:

Ուխտագրի ընթերցումից հետո, նորընծաները այն ստորագրում են: Ուխտագիրն ստորագրում են նաև Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պողապալյանը՝ որպես վկաներ:

Հաջորդ օրը Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու ս. պատարագ և կատարելու եպիսկոպոսական ձեռնադրություն: Հայոց Հայրապետին, որպես առընթերականներ, ուղեկցում են Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պողապալյանը: Օրվա հանդիսության խարտավիլակն է Տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Մայր տաճարի Ս. Ստեփանոսի սեղանի առաջ սկսվում է ձեռնադրության սուրբ Խորհուրդը: Ամենայն Հայոց Հայրապետը իր աղոթքներով և օրհնությամբ նորընծաներին է շնորհում եպիսկոպոսական կոչման յոթ աստիճանները:

Այնուհետև Ավագ Սեղանի վրա Նորին Սրբությունը շարունակում է ձեռնադրությունը:

Հայոց Հայրապետը ընթերցում է ձեռնադրության մեծ աղոթքը՝ «Դու, Տէ՛ր, այսօր վերածեր տնօրինութեամբ քո ի քահանայապետական շնորհ, տո՛ւր սոցա նմանիլ Քեզ՝ ճշմարիդ Հովուիդ, դնել վանձինս իւրեանց ի վերայ ոչխարաց, առաջնորդ լնել կուրաց, լոյս խաւարելոց, խրատիչ անկգամաց, լուսատու տիեզերաց...»:

Սույն աղոթքից հետո, նորընծաները, ծընրադիր, դեմքերը դարձրած դեպի հավատացյալ բազմությունը, հրաժարվում են աշխարհի ունայնություններից, նույն պահին էլ հրն-

Վեհափառ Հայրապետը օծում է ճակատը Տ. Վազգեն նորապակ եպիսկոպոսի

Վեհափառ Հայրապետը օծում է ճակատը Տ. Տաթև նորապսակ եպիսկոպոսի

չում է «Աստուածային և երկնաւոր շնորհ...» շարականի երգեցողությունը, որը կրկնվում է երեք անգամ: Վեհափառ Հայրապետը կատարում է ձեռնադրության ու օծման կարգը:

Ապա համապատասխան աղոթքներով նորաոծ եպիսկոպոսներին տրվում է եպիսկոպոսական գավազան և մատանի:

Վերջին Ավետարանի ընթերցումից հետո, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է ձեռնադրության խորհուրդը:

Այնուհետև Հայոց Հայրապետը նորապսակ եպիսկոպոսներին տալիս է Իր հայրական պատգամն ու խորհուրդները:

Նորին Սրբությունը Իր քարոզն սկսում է «Ուրախ լեր, Ս.Եկեղեցի» բնաբանով: Իր խոսքի սկզբում Վեհափառ Հայրապետը նշում է, որ այսօր ս. պատարագի արարողության ընթացքում կատարվեց սրբական մի խորհուրդ՝ Հայ Առաքելական Եկեղեցու երկու ծայրագույն վարպետների շնորհվեց եպիսկոպոսական աստիճան: Դա մեր Եկեղեցու համար բացառիկ արարողություն է՝ հոգեվայել երգեցողություններով և աղոթքներով:

Այնուհետև Նորին Սրբությունը հավատացյալ ժողովրդին է ներկայացնում նորընծա երկու եպիսկոպոսներին, խոսում նրանց հոգևոր բարեմասնությունների և ծառայության ոգու մասին:

Վերջում Իր խոսքն ուղղելով նորընծա եպիսկոպոսներին՝ Հայոց Հայրապետն ասում է. «Սիրելի սրբականներ, այս հուսիչ և հանդիսավոր պահին, հոծ հավատացյալ ժողովրդի ներկայությամբ, դուք ձեր ուխտը կատարեցիք՝ անմնացորդ կերպով ձեր կյանքը նվիրելու մեր մայր Եկեղեցուն, մեր համաս հավատացյալ ժողովրդին և մեր վերածնված մայր հայրենիքին: Այս երեք գաղափարները մեր գիտակցության մեջ կազմում են մեկ անբաժան ամբողջություն: Վստահ եմ, որ դուք այդ ոգով կնվիրվեք Եկեղեցուն, ազգին և հայրենիքին ու բարձր գիտակցությամբ կշարունակեք ձեր առաքելությունը, այս անգամ եպիսկոպոսական գերագույն իշխանությամբ:

Մաղթում եմ ձեզ հոգվո և մարմնո լիակատար տոկուն առողջություն, անսպառ եռանդ, կորով, համբերություն և իմաստություն, որպեսզի շարունակեք ձեր սրբական ծառայությունը:

«Ողջ լերուք, կօրացեալ սուրբ Հոգւով, յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի մէնջ, ամէն»:

Վեհափառ Հայրապետի ոգեշունչ խոսքից հետո շարունակվում է ս. պատարագը:

Հավարտ ս. պատարագի Հայոց Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ուր ժամը 15-ին նորաոծ Տ. Վազգեն և Տ. Տաթև եպիսկոպոսների պատվին տրվում է պաշտոնական ճաշկերույթ:

Ճաշկերույթին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանները և սփյուռքահայ հյուրեր, այդ թվում՝ Բրազիլիայի Ազգային Կենտրոնական Վարչության ատենապետ Արշավիր Տոնելյանը, վարչության անդամ գանձապահ Արթուր Ավետիսյանը, համայնքային վարչության անդամներ Թորոս Ջանիկյանը, Զոհրապ Քումերյանը, Կանադայից Ջորջ Իսրայելյանը, տիկին Բոյաջյանը և այլ ուխտավորներ:

Ճաշկերույթին ներկա էին հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Լատվիայի Ավետարանական-լութերական Եկեղեցու արքեպիսկոպոս, Նորին Սրբազնություն Տ. Յանիս Մատուլիսը և արտաքին հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար պատվելի Կառլիս Գայլիտիսը:

Սույն ճաշկերույթին ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ճաշկերույթի ժամանակ նորապսակ սրբականներին առաջինը շնորհավորելով՝ Վեհափառ Հայրապետը Իր խորունկ ուրախությունն ու գոհունակությունն է հայտնում օրվա արարողության համար և Կանադայի ու Բրազիլիայի հայոց թեմերի առաջնորդ եպիսկոպոսներին ցանկանում նորանոր հաջողություններ իրենց հոգևոր առաքելության ճանապարհին:

Հայոց Հայրապետի խոսքից հետո նորապսակ սրբականներին ուղղված շնորհավորանքի սրտագին խոսքեր են ասում Տ. Սիոն արքեպիսկոպոսը, պր. Արշավիր Տոնելյանը, տիկին Բոյաջյանը և ուրիշներ:

Վերջում Վեհափառ Հայրապետին ուղղյալ որդիական երախտագիտության և շնորհակալական սրտաբուխ ջերմ խոսքեր են արտասանում նորապսակ եպիսկոպոսները՝ մի անգամ ևս շեշտելով, որ հավատարիմ կմնան իրենց ուխտին և ամեն ինչ կանեն արդարացնելու Հայոց Հայրապետի սպասումներն ու հույսերը:



# Տ. ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՇԻՇՅԱՆ

Ծնվել է 1935 թ. Ալեքսանդրետ քաղաքում: Ավագանի անունը եղել է Նուբար: Նախնական կրթությունն ստացել է Բեյրութի ազգային վարժարանում, ապա շարունակել է իր ուսումը նույն քաղաքի Հ. Բ. Ը. Միության Հովակիմյան-Մանուկյան միջնակարգ դպրոցում:

1949 թ. ընդունվել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքը, որի լրիվ դասընթացն ավարտել է 1955 թ.: Այնուհետև, որպես ուսուցիչ, որոշ տարիներ պաշտոնավարել է սփյուռքահայ տարբեր կրթական հաստատություններում՝ Անթիլիասի նախակրթարանում, Դամասկոսի ազգային վարժարանում, ապա նաև Երուսաղեմի Թարգմանչաց վարժարանում՝ դասավանդելով հայագիտական մի շարք առարկաներ: Երուսաղեմում գտնվելու շրջանում վարել է նաև Երուսաղեմի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթ «Սիոն» ամսագրի տնօրինությունը՝ մաս կազմելով հիշյալ ամսագրի խմբագրությանը:

1959 թ. Կահիրեի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ երջանկահիշատակ Տ. Մամբրե արքեպ. Սիրունյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Տ. Վազգեն աբեղա: Որպես հոգեվորական, երիտասարդ հայր սուրբը այնուհետև երկու տարի վարել է Եթովպիայի և նրա շրջակայքի հայոց հոգևոր հովվի և առաջնորդական փոխանորդի պաշտոնները:

1961—1968 թվականներին ծառայել է Մարսելում որպես տեղի հայոց հոգևոր հովիվ ու նաև որպես ներկայացուցիչը Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատմիրակ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի: Մարսելում Տ. Վազգեն աբեղայի հոգևոր ծառայության տարիները եղել են բեղուն և արդյունավետ: Այս շրջանում նրա նախաձեռնությամբ ու ջանքերով նորոգվել են երկու եկեղեցիներ. կառուցվել են երկու հովվատներ և եկեղեցու սրահներ: Իր հովվական և եկեղեցական աշխատանքներին զուգահեռ, Տ. Վազգեն աբեղան 1962—1965 թվականներին կանոնավոր կերպով հետևելով Էքս-ան-Պրովանսի համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության դասընթացներին, ավարտել է համալսարանը փայլուն հաջողությամբ՝ ձեռք բերելով բարձրագույն մասնագիտական կրթություն: Իր շրջանավարտության առիթով, 1965 թ. սեպտեմբերի 13-ին, Տ. Սերովբե արքեպիսկոպոսից ստացել է վարդապետական աստիճան և ծաղկյա մանուշակագույն փիլոն կրելու իրավունք:



1968 թ. հայր սուրբը պաշտոնավարության է մեկնել Միացյալ նահանգներ, որտեղ ավելի քան տասը տարի մեծ եռանդով ու նվիրումով հաջորդաբար ծառայել է Սաութ Միլվոքիի, Նիագարա Ֆոլսի, Ս. Քեթրինգի, Լորանսի և Պրովիդենսի հայոց եկեղեցական համայնքներում որպես հոգևոր հովիվ:

1976 թ. հուլիսի 11-ին ԱՄՆ-ի հայոց արե-

վելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանից ստացել է ծայրագույն վարդապետական աստիճան:

1979 թ. նշանակվել է առաջնորդական փոխանորդ Կանադայի հայոց թեմի:

1983 թ. Տ. Վազգեն ծ. վարդապետը ընտրվել է Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի թեմական խորհրդի անդամ և նույն տարվա սեպտեմբերի 3-ին ստանձնել է Կանադայի հայրապետահաստատ նոր թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնը, որը վարել է ձեռնհասությամբ: 1984 թ. հոկտեմբերի 6-ին Կանադայի հայոց պատգամավորական Բ ժողովը միաձայնությամբ նրան ընտրել է կանադահայոց առաջնորդ:

1984 թ. հոկտեմբերի 14-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ ձեռնադրվել և օծվել է եպիսկոպոս կանադահայ թեմի վրա, իբրև առաջին թեմական առաջնորդ:

Տ. Վազգեն եպիսկոպոսը Հայ Եկեղեցու շնորհալի հոգևորականներից է՝ օժտված գրական և վարչական ձիրքերով: Աշխատակցել է սփյուռքահայ մի շարք թերթերի և պարբերականների:



# Տ. ՏԱԹԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԻԲՅԱՆ

Ծնվել է 1937 թ. Սիրիայի Հալեպ քաղաքում վեյթունցի ծնողներից: Ավագանի անունը եղել է Հովհաննես: Նախնական և միջնակարգ կրթությունն ստացել է Հալեպի Հիսուսյան հայրերի վարժարանում: Ուսումնառության մի քանի տարիների ակամա ընդմիջումից հետո, հոգևորական դառնալու կոչումը նրան տանում է Երուսաղեմի հայոց վանք: Այստեղ նա ընդունվում է Սրբոց Հակոբյանց Ժառանգավորաց վարժարան, որտեղ կանոնավոր կերպով հետևելով ընծայարանի ուսումնական ծրագրին և հաջողությամբ ավարտելով այն՝ 1963 թվականին, ձեռամբ Երուսաղեմի հայոց Ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքի, ձեռնադրվում է կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Տ. Տաթև աբեղա:

1963—1966 թվականներին Տ. Տաթև աբեղան մեծ եռանդով և ձեռնհասությամբ վարում է Ժառանգավորաց վարժարանի և Ընծայարանի փոխտեսչի պատասխանատու պաշտոնը: Ապա Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ Տ. Բաբկեն արքեպ. Ապատյանի կողմից հրավիրվում է Արգենտինա՝ ծառայելու որպես Կորդոբայի հայոց հոգևոր հովիվ: Այստեղ, տասնչորս տարի անընդմեջ, երիտասարդ հայր սուրբը ունենում է եկեղեցական, ազգային, կրթական ու վարչական արդյունավետ գործունեություն: 1975 թ. հայրապետական պատվիրակ Տ. Բաբկեն սրբազանի ձեռամբ ստանում է ծայրագույն վարդապետական աստիճան:

1980 թ. բրազիլահայ թեմի ազգային իշխանության հրավերով և Ամենայն Հայոց Հայրապետի հավանությամբ, Տ. Տաթև ծայրագույն վարդապետը մեկնում է Սան-Պաուլո, որտեղ լծվում է թեմի կազմակերպման աշխատանքներին: Բրազիլահայ թեմական

ժողովը, գնահատելով նրա եռանդուն ծառայությունը և վարչա-կազմակերպչական կարողությունները, 1982 թ. դեկտեմբերին նրան ընտրում է առաջնորդ նորակազմ բրազիլահայ թեմի: Ամենայն Հայոց կաթողիկոսը հաստատում է նրա ընտրությունը:

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, ընդառաջելով բրազիլահայ թեմի ազգային իշխանությանց պաշտոնական դիմումին, 1984 թ. հոկտեմբերի 14-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի Մայր տաճարում նրան ձեռնադրում է եպիսկոպոս բրազիլահայ թեմի վրա, իբրև առաջին թեմական առաջնորդ:




## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հոկտեմբերի 3-ին, չորեքշաբթի.**—Այսօր, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հավաքույթ:

Հավաքույթի ընթացքում Գլաձորի համալսարանի հիմնադրման 700-ամյակին նվիրված «Գլաձորի համալսարանը և նրա դերը կաթոլիկ միսիոներների դեմ մղված պայքարում» բովանդակալից վեկուցումով հանդես է գալիս Տ. Շնորհք աբեղա Բաղդասարյանը: Զեկուցման մեջ հայր սուրբը վեր է հանում այն կարևոր դերը, որ խաղացել է Գլաձորի համալսարանը կաթոլիկ ունիթոռների դեմ մղված պայքարում, պայքար, որը բխում էր Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի շահերից:

Վերջում տեղի է ունենում մտքերի փոխանակում, և վեկուցողը պատասխանում է իրեն ուղղված մի շարք հարցերի:

* * *

**Հոկտեմբերի 6-ին, շաբաթ.**—Այսօր, երեկոյան, Ս. Գայանե եկեղեցուն կից գերեզմանատանն ամփոփված վեհամոր՝ Սիրանույշ Պալճյանի գերեզմանին, Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան կարգ վեհամոր մահվան 10-րդ տարելիցի առթիվ:

Արարողությունից հետո Վեհափառ Հայրապետին ուղղված մխիթարական խոսք է ասում Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը:

* * *

**Հոկտեմբերի 7-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Խաչի քո Քրիստոս երկիրպագանեմք» (Շարական) բնաբանով:

Վերջում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան կարգ՝ նվիրված նորոգ հանգուցյալ, շախմատի աշխարհի կրկնակի չեմպիոն Տիգրան Պետրոսյանի հիշատակին:

* * *

**Նույն օրը,** առավոտյան ժամը 11-ին, Էջմիածին քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ արտասանում ոգեշունչ քարոզ «Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ» (Մատթ. ԻԱ 23) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Լիոնի հայոց

առաջնորդ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն Ս. Աստվածածին եկեղեցու նախկին ավագ քահանաների՝ հանգուցյալ Տ. Քերովբեի և Տ. Վարդանի հոգիների խաղաղության համար:

*
* *

**Հոկտեմբերի 10-ին, չորեքշաբթի.**—Այսօր, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հավաքույթ:

Հավաքույթի ընթացքում Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը վեկուցում է ԺԳ դարի մատենագիր Կիրակոս Երզնկացու աստվածաբանական հայացքների մասին՝ հիմք ընդունելով մատենագրի «Թուղթ ընդհանրական» աշխատությունը:

*
* *

**Հոկտեմբերի 13-ին, շաբաթ.—Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրովբայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւիթ Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն:**

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ է մատուցում Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն վրդ. Քեշիշյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ ասէ, մի՛ մերձենար այսր. լոյծ վկոշիկս քո յոտից, զի տեղիդ յորում կաս դու ի դմա՝ երկիր սուրբ է» (Ելք. Գ 5) բնաբանով:

*
* *

**Հոկտեմբերի 17-ին, չորեքշաբթի.**—Այսօր, առավոտյան, հոգևոր ճեմարանի սաները, գլխավորությամբ ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանի, մեկնում են Եղեգնաձոր՝ մասնակցելու Գլաձորի համալսարանի հիմնադրման 700-ամյակին նվիրված տոնակատարությանը:

*
* *

**Նույն օրը,** երեկոյան, Վեհարանի ընդունելությանց սրահում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հավաքույթ:

Հավաքույթի ընթացքում Հովհան Մանդակունու կյանքի ու գործունեության մասին վեկուցումով հանդես է գալիս Հայկ սրկ. Չիլինգարյանը:

*
* *

**Հոկտեմբերի 21-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Քեշիշյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսում:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Հոկտեմբերի 23-ին, երեքշաբթի.**—Այսօր Ամենայն Հայոց Հայրապետին է այցելում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հրավերով Գլաձորի համալսարանի հիմնադրման 700-ամյակի հանդիսություններին մասնակցելու համար մայր հայրենիք հրավիրված սփյուռքահայ մշակութային գործիչների պատվիրակությունը:

Պատվիրակության կազմում էին՝ պրոֆ. Ավետիս Սանճյանը (Կալիֆորնիայի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ), Օշին Քեշիշյանը (Լոս Անջելոսում հրատարակվող «Արմենիոն Օբզրվոր» թերթի խմբագիր), Երվանդ Քասունին (Բեյրութում հրատարակվող «Հայագիտական հանդես»-ի խմբագիր), պրոֆ. Գալուստյանը (Բեյրութից), ճարտարապետ Արմեն Հախնազարյանը (Թեհրանի թեմական խորհրդի անդամ), աստղագետ դոկտ. պրոֆ. Հակոբ Թերզյանը (Լիոնից) և ուրիշներ:

Վեհափառ Հայրապետի և պատվիրակության անդամների միջև տեղի է ունենում զրույց ջերմ և սրտագին մթնոլորտում:

*
* *

**Հոկտեմբերի 24-ին, չորեքշաբթի.**—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Ախենի համալսարանի (Արևմտյան Գերմանիա) դասախոս, ճարտարապետ դոկտ. Արմեն Հախնազարյանի դասախոսությունը պատմական Արտազ գավառի հայկական վանքերի մասին:

Դասախոսությունը ուղեկցվում էր գունավոր պատկերների ցուցադրմամբ:

*
* *

**Հոկտեմբերի 28-ին, կիրակի.—Գիտ Խաչի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի

վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, եւ ես՝ աշխարհի» (Գաղ. Զ 14) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Հոկտեմբերի 31-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հավաքույթ:

Հավաքույթի ընթացքում հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը խոսում է Լենինգրադի հոգևոր ակադեմիայի հիմնադրման 175-ամյակին նվիրված հանդիսությունների մասին:

*
* *

**Օգոստոսի 29-ին, չորեքշաբթի.**—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին և Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի հետ հանդիպում ունեցան սփյուռքահայ մի խումբ ուսուցիչներ, որոնք մայր հայրենիք էին եկել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հրավերով՝ կրթական գործի մեջ կատարելագործվելու համար: Խումբը բաղկացած էր թվով 56 ուսուցիչ-ուսուցչուհիներից: Նրանք եկել էին աշխարհի տարբեր երկրներից՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Կանադայից, Անգլիայից, Ֆրանսիայից, Արևմտյան Գերմանիայից, Շվեդիայից, Հունաստանից, Կիպրոսից, Ավստրալիայից, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրներից՝ Լիբանանից, Հորդանանից, Իսրայելից, Սիրիայից և այլն:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սփյուռքահայ ուսուցիչների խումբը այցելեց Մայր տաճար, եղավ նրան կից թանգարանում, ինչպես նաև «Ալեք և Մարի Մանուկյան գանձատանը»:

Վեհարանի ընդունելությանց դահլիճում խմբի անդամների անունից Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված ողջույնի խոսք ասաց խմբի ղեկավար, Աթենքի «Նոր աշխարհ» թերթի խմբագիր պրն. Զավեն Գրիգորյանը: Նա նշեց, որ ամեն տարի, հայրենիքի կառավարության հրավերով, մայր հայրենիք են գալիս սփյուռքահայ կրթական մըշակներ և վերապատրաստվում կայուն գիտելիքներով՝ իրենց հետ տանելով հայրենիքի կարոտն ու Ս. Էջմիածնի օրհնությունը:

Մեծ ուշադրությամբ և հետաքրքրությամբ ունկնդրվեց Վեհափառ Հայրապետի քաջալերանքի և օրհնության խոսքը: Նորին Սրբությունը մեծապես գնահատեց այն հերոսական ճիգերը, որ ի գործ են դնում սփյուռքի հայ ուսուցիչները, որպեսզի հեռավոր ափերում միշտ հնչի մայրենի քաղցր լեզուն և միշտ ամուր մնա պապենական հավատքն ու հայրենիքի սերը: Վեհափառ Հայրապետը օրհնեց սփյուռքահայ ուսուցիչներին և մաղթեց, որ նրանք, գոտեպնդված հայրենի տպավորություններով ու Ս. Էջմիածնի օրհնությամբ, վերանորոգված եռանդով ու հավատով առաջ տանեն հայ մատաղ սերնդի կրթության և հայեցի դաստիարակության սրբազան գործը:



# ԼԱՏՎԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ Տ. ՅԱՆԻՍ ՄԱՏՈՒԼԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի հոկտեմբերի 12—15 օրերին, Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով, Մայր Աթոռում էր գտնվում Լատվիայի Ավետարանական-լութերական Եկեղեցու պետ Տ. Յանիս Մատուլիս արքեպիսկոպոսը:

Հոկտեմբերի 12-ին Տ. Յանիս Մատուլիս արքեպիսկոպոսը, ընկերակցությամբ Լատվիայի Ավետարանական-լութերական Եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար պատվելի Կառլիս Գայլիտիսի, ժամանում է Երևան: Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում հյուրերին դիմավորում և բարի գալուստ են մաղթում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պողապալյանն ու Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը:

Նույն օրը, կեսօրին, Վեհարանի ընդունելությանց դահլիճում բարձրաստիճան հյուրին ողջունում և բարի գալուստ է մաղթում Ամենայն Հայոց կաթողիկոսը: Հայոց Հայրապետի և Տ. Մատուլիս արքեպիսկոպոսի միջև տեղի է ունենում կրոյց եղբայրական ջերմ և սիրալիր մթնոլորտում: Զրույցին ներկա են լինում Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պողապալյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Վազգեն ծ. վարդապետ Քեշիշյանը և Տ. Տաթև ծ. վարդապետ Ղարիբյանը:

Նույն օրը, ի պատիվ բարձրաստիճան հյուրերի, Վեհափառ Հայրապետը տալիս է ճաշկերույթ: Հավարտ ճաշկերույթի հյուրերը այցելում են Մայր տաճար, ապա ծանոթանում Մայր Աթոռի թանգարաններին:

Հաջորդ օրը, հոկտեմբերի 13-ին, ուղեկցությամբ Տ. Ասողիկ աբեղայի, մեծարգո հյուրերը ուղևորվում են Երևան և այցելում Ծիծեռնակաբերդի հայ նահատակաց հուշարձան՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Ապրիլյան Եղեռնի զոհերի հիշատակին: Այնուհետև նրանք այցելում են Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան և ծանոթանում հայ դպրության մեծարժեք հուշարձաններին:

Նույն օրը, հետմիջօրեի, Մայր Աթոռի հյուրերը ուղևորվում են Գառնի, ապա Ս. Գեղարդի վանք: Այստեղ հյուրերի պատվին տրվում է ճաշկերույթ:

Վերադարձին Տ. Մատուլիս արքեպիսկոպոսը և ընդհանուր քարտուղար Կառլիս Գայլիտիսը այցելում են Վաղարշապատի պատմական վանքերը:

Կիրակի օրը, հոկտեմբերի 14-ին, բարձրաստիճան հյուրերը Մայր տաճարում ներկա են լինում հայրապետական սուրբ պատարագին: Այդ օրը Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ կատարվում է եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում:

Հավարտ պատարագի հյուրերը ներկա են գտնվում Վեհարանի սեղանատանը նորապսակ եպիսկոպոսների պատվին կազմակերպված պաշտոնական ճաշկերույթին:

Երեկոյան ժամը 20-ին, ընկերակցությամբ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանի, հյուրերը Երևանի Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում ներկա են լինում ամերիկահայ հանրաճանաչ երգեհոնահար Պերճ Ժամկոչյանի համերգին:

Հետևյալ օրը, հոկտեմբերի 15-ին, Տ. Մատուլիս արքեպիսկոպոսը և պատվելի Կառլիս Գայլիտիսը, գոհունակություն հայտնելով ցուցաբերված ջերմ ընդունելության համար, հրաժեշտ են առնում Հայոց Հայրապետից և Մայր Աթոռից մեկնում երախտագետ զգացումներով:



## ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ

**Սեպտեմբերի 23-ին, կիրակի օրը,** աղոթքով, հանդիսավոր իրադրության մեջ, Ս. Գայանե վանքի շրջափակում, Հայոց Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվում է աղբյուր-հուշարձանի բացում՝ ի հիշատակ Մեծ Եղեռնի ընթացքում նահատակված կարնեցիների:

Մի պահ աղբյուր-հուշարձանի բացման հանդիսավոր արարողությունից

Հուշարձանը կառուցվել է Միացյալ Նահանգների Կարնո Հայրենակցական Միության նվիրատվությամբ:

Հուշարձանի բացմանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, սփյուռքահայ մի շարք թեմերի թեմական առաջնորդները, բարձրաստիճան հոգևորականներ և ԱՄՆ-ի Կարնո Հայրենակցական Միության անդամներ:

Վեհափառ Հայրապետը թափորով առաջնորդվում է աղբյուր-հուշարձանի մոտ՝ կատարելու նրա հանդիսավոր բացումը:

Մայր Մաշտոցից կատարվում են համապատասխան աղոթքներ, ս. գրական ընթերցումներ, երգվում են շարականներ:

Այնուհետև բացման խոսք է ասում Մայր Աթոռի միաբան Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը: Հայր սուրբը իր ելույթում նշում է, որ Ս. Գայանե կույսի նշխարների մոտ կառուցված աղբյուր-հուշարձանը մեկն է հայրենի հողի վրա կանգնած այն բազում հուշակոթողներից, որոնք խորհրդանշում են հայ ժողովրդի կենսունակությունը, նրա ապրելու և գոյատևելու կամքը:

Կարնո Հայրենակցական Միության անունից սրտագին խոսք է ասում նաև բոստոնահայ հասարակական գործիչ Գևորգ Ներսիսյանը: Նա նշում է, որ նորակառույց աղբյուր-հուշարձանը բավմահապար հայ նահատակների հիշատակը հավերժացնող նվիրական մի կոթող է. ով որ խմի նրա սառնորակ ջրից, թող աղոթի նրանց հոգիների խաղաղության համար:

Վերջում փակման խոսքով հանդես է գալիս Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը:

Աղբյուր-հուշարձանի նախագծի հեղինակն է Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը, իսկ կատարող վարպետը՝ քանդակագործ Էդիկ Հակոբջանյանը:



## ՀԱՆԳԻՍՏ ՍԱՐԳԻՍ ՔՅՈՒՐՔՃՅԱՆԻ

Սույն թվականի սեպտեմբերի 22-ին, Լոնդոնում, կյանքի 87-րդ տարում, իր մահկանացուն կնքեց Մայր Աթոռի բարերար, սփյուռքահայ ազգային-հասարակական ծանոթ գործիչ Սարգիս Քյուրքճյանը: Նա մեկն էր իր ազգի այն տարաբախտ կավակներից, որոնք վաղ հասակից տարագրվեցին իրենց բնիկ երկրից, օտար ափերում իրենց բազում սերնդակիցների հետ ճաշակեցին թափառական կյանքի դառնությունները, բայց երբեք չկորցրին իրենց ոգեկան արիությունը, հպարտությամբ պահպանեցին իրենց մայրենի լեզուն, կրոնական ու ազգային ավանդությունները և իրենց գիտակցական ողջ կյանքը նվիրեցին սփյուռքի հայության ազգային ինքնության պահպանման ու գոյատևման սրբազան գործին:

Սարգիս Քյուրքճյանը ծնվել է 1897 թվականին Արևմտյան Հայաստանի Խարբերդ քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է իր ծննդավայրում, ապա տեղափոխվել է Պարտիզակ և իր ուսումը շարունակել տեղի ուսումնարանում, իսկ այնուհետև՝ Կ. Պոլսի Ռոբերտ քոլեջում: Մեծ Եղեռնին նախորդող տարիներին անցնում է Եվրոպա և որոշ ժամանակ հետևում Շվեյցարիայի Նյուշատել քաղաքի համալսարանի առևտրական բաժնի դասընթացներին:

1927 թվականին տեղափոխվելով Կահիրե՝ ամուսնանում է եկեղեցական ավանդություններով սնված մի հայուհու՝ Աստղիկ Մանսուրյանի հետ, կազմում է հայկական տիպար մի ընտանիք և ունենում երկու մանչ զավակներ՝ Գևորգ և Հովհաննես Քյուրքճյանները:

1930 թ. Սարգիս Քյուրքճյանը ընտանիքով վերջնականապես բնակություն է հաստատում Լոնդոնում և իր առևտրական գործերին զուգընթաց՝ զբաղվում ազգային-հասարակական եռանդուն գործունեությամբ: Ազգային մեծ բարերար Գալուստ Կյուլպենկյանի անձնական ներկայացուցիչ Ավետիս Հակոբյանի կողմից նշանակվում է Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության անդամ, 1962 թ. դառնում է այդ խնամակալության նախագահ, իսկ 1972 թ.՝ պատվո նախագահ, և այդ պաշտոնում մնում մինչև իր կյանքի վերջը:

Լոնդոնաբնակ ծանոթ ազգայիններ Արշակ Սաֆրաստյանի, Լևոն Ապաճյանի և այլոց հետ հանգուցյալը գործուն մասնակցություն է ունեցել լոնդոնահայ համայնքի կազմության աշխատանքներին՝ դառնալով լոնդոնահայ համայնքային խորհրդի առաջին ատենապետը: Ավելի ուշ նա որոշ ժամանակ վարել է նաև Հ. Բ. Հ. Միության Լոնդոնի մասնաճյուղի ատենապետության պաշտոնը: Բացի այդ, նա մինչև իր կյանքի վախճանը

եղել է «Աբգար Թրասթ»-ի անփոփոխ ատենապետը:

Սարգիս Քյուրքճյանն առաջին անգամ մայր հայրենիք է այցելում համաշխարհային երկրորդ պատերազմից հետո, 1945 թ., իսկ 1955 թ. պաշտոնական այցելությամբ կրկին լինում է Հայաստանում՝ մասնակցելու Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ընտրությանը, ինչպես նաև նրա օծման և գահակալության հանդիսություններին: Այդ առթիվ նա ստանձնում է Նորին Սրբության կնքահայրության պատվավոր պաշտոնը:

Որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հավատարիմ զավակը, Սարգիս Քյուրքճյանը անմնացորդ նվիրումով, թե՛ նյութապես և թե՛ բարոյապես, ծառայել է իր առաքելական Մայր Եկեղեցուն՝ նրա ծաղկմանն ու բարգավաճմանն ի խնդիր: Նա խորին հարգանք և պաշտամունքի հասնող սեր ուներ դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու նրա գահակալ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը: Այդ հարգանքի և սիրո արտահայտությունն էին անկասկած նրա սրտաբուխ նվիրատվությունները ի նպաստ Ս. Էջմիածնի: Նրա տրամադրած նյութական միջոցներով հնարավոր եղավ իրականացնել Բշնիի Ս. Աստվածածին պատմական եկեղեցու առաջին վերանորոգությունը: Նրա փափագով և իր որդիների նյութական կարևոր օժանդակությամբ արտաքուստ և ներքուստ հիմնովին վերանորոգվեց Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցին: Բացի այդ, զանազան առիթներով նա նյութական կարևոր հատկացումներ է արել ի նպաստ Մայր Աթոռի կարիքների: Որպես Մայր Աթոռի բարերար նրա անունը արձանագրված է Ս. Էջմիածնի Վեհարանի պատվո մարմարյա տախտակին: Ի գնահատություն Հայ Եկեղեցուն և ազգին մատուցած նրա բազում ծառայությունների, երջանկահիշատակ Տ. Գևորգ Զ կաթողիկոսը և այժմյան Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը նրան պարգևատրել են Ս. Գրիգոր Լուսավորչի և Ս. Ներսես Շնորհալու շքանշաններով:

Սարգիս Քյուրքճյանի անունը կմնա նաև իբրև ազգասեր և հայրենասեր անձնավորություն: Նա բազմիցս այցելել է Մայր Հայաստան և իր այցելությունների ընթացքում հաճախ իր հետ բերել հայկական հին արժեքավոր ձեռագրեր ու նվիրել Երևանի պետական Մատենադարանին, որի համար Մատենադարանի տնօրենության կողմից պարգևատրվել է Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան շքանշանով:

Հանգուցյալի հուղարկավորությունը տեղի է ունեցել սեպտեմբերի 28-ին, ուրբաթ օրը, Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցում՝ նախագահությամբ Անգլիայի հայոց առաջնորդ Տ. Եղիշե եպիսկոպոս Կիպրյանի: Արարողությանը ներկա են եղել հանգուցյալի հարազատներն ու բարեկամները, ինչպես նաև Լոնդոնի հայոց համայնքային եկեղեցական խորհրդի և Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության անդամները, ազգային զանազան կազմակերպությանց ներկայացուցիչներ և լոնդոնահայ բազմաթիվ ազգայիններ: Հավարտ արարողության հանգուցյալի մարմինը սգակիրների թափորով ժամանակավորապես փոխադրվել է Բաթնի Վեյլի դիակիզարան: Նրա աճյունը պետք է իր վերջնական հանգիստը գտնի մայր հողում, Ս. Գայանե վանքում:

Հայ Եկեղեցու անձնվեր զավակ և Մայր Աթոռի մեծ բարերար Սարգիս Քյուրքճյանի մահվան տխուր առիթով Վեհափառ Հայրապետը հանգուցյալի հարազատներին հղել է ցավակցական հետևյալ հեռագիրը.

«Այսօր, երբ մեր թանկագին Սարգիս Քյուրքճյանի հոգին կբարձրանա դեպի անհունը երկնքին, Մենք հավատավոր սրտով կաղոթենք Փրկչին Իշման Սեղանի առջև, որ Տերն արժանի ընե զայն երկնային փառաց լույսին:

Սարգիս Քյուրքճյան, բարեպաշտ նվիրյալ զավակը մեր սուրբ Եկեղեցիին և մեծ հոգատար բարերարը Մայր Աթոռիս, կբաժնվի այս անցավոր կյանքեն իր պարտքը լիությամբ կատարած մեր ազգին և իր պատվական ընտանիքին հանդեպ:

Օրհնություն անոր արդար հոգիին և բարի հիշատակին:

Մեր խորագույն ցավակցությունները ձեզի բոլորիդ: Սուրբ Հոգին թող մնա ձեզի մխիթարիչ և ձեզի պարգևե խաղաղ կյանք ու ամեն բարիք»:

Սեպտեմբերի 23-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի Մայր տաճարում, հավարտ պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն Սարգիս Քյուրքճյանի հիշատակին:

Այս տխուր առիթով «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը իր խոր ցավակցություններն է հայտնում հանգուցյալի վշտակիր ընտանիքին և բոլոր հարազատներին:



## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔ՝ ՈՒԽՏԻ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ

Ետևում թողնելով հազարավոր կիլոմետրեր, հայրենիքը վայրկյան առաջ տեսնելու անհագ ցանկությունը իրենց հոգում, մի խումբ հայորդիներ օդանավի կանգնելուն պես սրտի թրթռոցով ոտք դրեցին Մայր Հայաստանի սպասման հողի վրա:

Ահա երևում է Արարատ լեռը, Երևանը, Արարատյան դաշտավայրը, Հայաստանի արևը: Ահա իրենց նախնիների սրբազան հողը: Հայաստանի հետ առնչվող տարիներով կուտակված հույզերը, տենչերն ու երազանքները դարձան իրականություն: Սա արդեն անհուն բերկրանք և երջանկություն է:

Այցելուները ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Միության անդամներից էին, որոնք Ամենայն Հայոց Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա-ի և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հրավերով ուխտի էին եկել Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Խմբի ղեկավարն էր Վաշինգտոնի հայոց Ս. Մարիամ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վրթանես քհն. Գալայճյանը: Խումբը բաղկացած էր երեսուն երկսեռ անդամներից՝ հավաքված ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի տարբեր նահանգներից:

Նրանք Հայաստան ժամանեցին հունիսի 17-ին: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն նրանց համար միջոցառումների հարուստ մի ծրագիր էր պատրաստել: Համաձայն այդ ծրագրի, կազմակերպվեցին հայոց լեզվի, հայկական ժողովրդական երգերի ու պարերի հատուկ դասընթացներ: Դասերից հետո, ապատ ժամերին, ամերիկահայ երիտասարդները հնարավորություն ունեցան ծանոթանալու Հայաստանի տեսարժան վայրերին ու հայրենաբնակ իրենց ժողովրդի կյանքին: Նրանք առանձնակի հուզումով ու խոր զգացմունքով այցելեցին և ծաղիկներ դրեցին Ծիծեռնակաբերդի 1915 թ. Մեծ Եղեռնի զոհերի հուշարձանին, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրին և Հաղթանակի զբոսայգում Անհայտ զինվորի գերեզմանին: Եղան մայրաքաղաքի տեսարժան վայրերում և մշակութային մի շարք օջախներում, ուղևորություն կատարեցին դեպի Սևան, Գոշավանք, Հաղարծին, Գեղարդ, Օշական, Աշտարակ, Բյուրական:

Հունիսի 19: Երջանիկ և անմոռանալի օր: Ազգիս Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հարավային Ամերիկա և Ֆրանսիա կատարած իր հովվապետական այցելությունից վերադառնում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Ամերիկահայ երիտասարդները մեծ ոգևորությամբ եկել էին Սուրբ Էջմիածին՝ դիմավորելու Ամենայն Հայոց Հայրապետին և Նրա ճանապարհին ծաղիկներ սփռելով՝ բարի գալուստ մաղթելու Նրան:

Հուլիսի 6-ին ամերիկահայ երիտասարդները եղան Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում, որտեղ նրանց ընդունեցին ու նրանց հետ զրույց ունեցան կոմիտեի նախագահի տեղակալներ Ս. Բաղդասարյանը և Կ. Միքայելյանը: Ս. Բաղդասարյանը երիտասարդներին հանգամանորեն պատմեց Հայաստանում վերջին տարիներին գիտության, մշակույթի, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության ասպարեզում հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումների մասին: Նա շեշտեց հայրենիքի հետ սփյուռքահայության սերտ կապի անհրաժեշտությունը՝ նշելով, որ հայն ուր որ

Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Միության անդամները Երևանի Մատենադարանի առջև

էլ ապրի, պիտի հիշի ու անպայման այցելի իր հայրենիքը, իր ժողովրդի բնօրրանը: Հանդիպման վերջում երիտասարդները կատարեցին խմբերգեր, պարեր ու արտասանություններ, ապա իրենց ջերմ շնորհակալությունները հայտնեցին, որ իրենց առիթ էր տրվել այցելելու Հայաստան և իրականացնելու տարիներով փայփայած իրենց երազանքները: Խմբի անդամներից Ռաֆիկ Մալխասյանն ասաց. «Մեր այցելության օրերուն մեր սեփական աչքերով տեսանք ներկա Հայաստանի նվաճումները: Մեր հայրենիքի կենդանությունն ու խաղաղությունը մեկի համար ամեն բանե վեր է: Ոչ մեկ ճշմարիտ հայ, ուր որ ալ գտնվի ան, հայրենիքեն ներս թե դուրս, տարբեր չի կրնար մտածել ու զգալ: Շատ հուզիչ ու ոգևորիչ է մեկի համար տեսնել, թե ինչպես մեր ժողովուրդի զավակները հերոսական ճիգերով, բազում դժվարություններ հաղթահարելով՝ մոխիրներեն ու ամայություններեն հաջողեր են ստեղծել փառավոր երկիր մը՝ զարգացած գիտությամբ, արդյունաբերությամբ ու մշակույթով»:

Հրաժեշտ տալու և օրհնություն ստանալու համար հուլիսի 12-ին ամերիկահայ երիտասարդները այցելեցին Մայր Աթոռ և Վեհարանում ընդունվեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսից:

Խմբի անունից Նոյին Սրբությանն ուղղված երախտագիտության խոսք ասաց Տ. Վըրթանես քհն. Գալայճյանը ցուցաբերված ջերմ ընդունելության համար:

Հուլիսի 14-ի առավոտյան Երևանի Արևմտյան օդանավակայանից ինքնաթիռ նստելիս ամերիկահայ երիտասարդներն իրենց հայացքը վերջին անգամ ուղղեցին Արարատին, Երևանին և հայոց արևին՝ խոստանալով միշտ հայ մնալ, կրկին ոչ կրկին այցելել Հայաստան և հավատարմորեն ծառայել հայրենիքին և հարազատ ժողովրդին:

Բարի՛ երթ ձեզ, սիրելիներ: Տարե՛ք ձեր հետ հայրենի արևի ջերմությունը և փոխանցե՛ք այն հայրենիքի կարոտը սրտերում հայրենիքից հեռու ապրող բոլոր հայերին:

ՍՏԵՓԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ







# ԼՈՒՐԵՐ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի մայիսի 19—20 օրերին Բաղդադի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում քահանայական կոչում և ձեռնադրություն է ստացել բարեշնորհ Հովսեփ սարկավագ Հովսեփյանը՝ ձեռամբ Իրաքի հայոց առաջնորդ Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանի:

Մի պահ ձեռնադրության արարողությունից

Մայիսի 19-ին, շաբաթ օրը, երեկոյան, կիրակամտի ժամերգության ավարտին, կատարվել է սարկավագի «Կոչումն քահանայության» արարողությունը՝ խարատավիլակությամբ Տ. Նարեկ քահանա Իշխանյանի: Այնուհետև սարկավագը հրապարակորեն արտասանել է Հայաստանյայց Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւնը» ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Հետևյալ օրը, մայիսի 20-ին, կիրակի, Բաղդադի հայոց եկեղեցում Երևման Ս. Խաչի տոնի առթիվ ս. պատարագ է մատուցել առաջնորդ սրբազանը: Ի ժամ պատարագի տեղի է ունեցել նորընծայի ձեռնադրության և օծման արարողությունը խուռներամ հայ հավատացյալների ներկայությամբ: Ապա առաջնորդ սրբազանը հոգեշունչ մի քարոզով ոգեկոչել է Երևման Ս. Խաչի տոնը, ինչպես նաև Սարդարապատի հերոսամարտի հիշատակը «Ապաւէն ցուցաւ մեզ սուրբ խաչն փրկչական զի յաղթեսցուք նովաւ անօրէն թշնամւոյն» բնաբանով: Այնուհետև Տ. Ա-վագ եպիսկոպոսը սրտագին շնորհավորանքներ է ուղղել նորընծա Տ. Գարեգին քահանային՝ մաղթելով նրան քաջառողջ և արևշատ կյանք և հույս հայտնելով, որ նա գիտակից նվիրումով, հավատարմությամբ և կարգապահությամբ կծառայի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն և հայ ժողովրդին:

Ձեռնադրության արարողությանը հյուրաբար ներկա են եղել Բաղդադի քրիստոնեական համայնքների հոգևոր պետեր՝ հանձինս ասորական ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Տ. Սևերիոս արքեպիսկոպոսի, քաղդեացիների պատրիարքի ներկայացուցիչ Էմմանուել եպիսկոպոսի և հայ Անարատ Հղության քույրերի: Նորաօծ քահանա Տ. Գարեգինի կընքահայրն է հանդիսացել Բաղդադի ազգայիններից պրն. Զոհրապ Գրիգորյանը:

Հավարտ պատարագի, հայոց առաջնորդարանի նորակառույց սրահում Տ. Գարեգինը ներկայացել է առաջնորդ սրբազանին՝ ստանալու նրա օրհնությունը և բարեմաղթությունները: Ապա ներկա հյուրերը շնորհավորել են նորաօծ քահանային:

Տ. Գարեգին քահանան իր ճգնության քառասուն օրերը անց է կացնելու Բաղդադի հայոց ծերանոցում:

* * *

Սույն թվականի օգոստոսի 1—10 օրերին Իրաքի քրիստոնյա մի շարք համայնքների հոգևոր առաջնորդներից բաղկացած մի պատվիրակություն՝ գլխավորությամբ Քաղդիացիների պատրիարք Ամենապատիվ Տ. Պողոս Բ Շիխոյի, հաջորդաբար այցելելով Վատիկան և Ժնև, պաշտոնական հանդիպումներ է ունեցել Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Հովհաննես Պողոս Բ Պապի և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի քարտուղարության հետ:

Պատվիրակության կազմում են եղել Բաղդադի և Բասրայի սիրիական օրթոդոքս համայնքի առաջնորդ Տ. Սերվիոս Հավա արքեպիսկոպոսը, Բաղդադի սիրիական կաթոլիկ համայնքի առաջնորդ Տ. Մաթթի Շաբա Մաթոքա արքեպիսկոպոսը և Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանը:

Վերոհիշյալ եկեղեցական երկու կենտրոններին տրված սույն այցելության նպատակն է եղել միասնաբար աղոթել վասն խաղաղության ամենայն աշխարհի և կրոնական գծով աջակցել Իրաքի և Իրանի միջև խաղաղ գոյակցության և բարիդրացիական հարաբերությունների հաստատման մարդասիրական գործին:

Հռոմի Սրբազան Քահանայապետը և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի քարտուղարությունը իրենց գոհունակությունն են հայտնել այս այցելության առթիվ և խոստացել են իրենց հերթին ջանք չխնայել պատվիրակության սույն աստվածահաճո առաքելության հաջողության համար:

Ժնևում գտնվելու օրերին պատվիրակության անդամները, Տ. Ավագ սրբազանի առաջնորդությամբ, այցելել են տեղի հայոց Ս. Հակոբ եկեղեցի, որտեղ նրանց ցույց է տրվել պատշաճ ընդունելություն: Ապա պատվիրակությունը, լրիվ կազմով, հյուրընկալվել է Ժնևահայ ազգային ծանոթ գործիչ տիար Մկրտիչ Շելեֆյանի բնակարանում:

# ԼՈՒՐԵՐ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

## ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱ

Սույն թվականի հուլիսի 23—26-ը ռումինահայ թեմի հոգևոր առաջնորդ Տ. Տիրայր արք. Մարտիկյանը, ընկերակցությամբ Տ. Զարեհ ծայրագույն վրդ. Պարոնյանի, այցելել է Տրանսիլվանիայի երբեմնի մայրաքաղաք Ալպա Յուլիայի թեմը՝ պատասխանելով տեղի առաջնորդ Տ. Էմիլիան Պիրտուշ եպիսկոպոսի հրավերին:

Այցելության առաջին օրը Տ. Էմիլիան եպիսկոպոսը Հարկիտա նահանգի Թուփլիցա վանքում ընդունել է առաջնորդ սրբական հորը քրիստոսավանդ ջերմ սիրով: Ընդունելությանը ներկա են եղել վանահայր Տ. Միքայել վարդապետը և ռումեն եպիսկոպոսի անմիջական գործակից քահանա հայրերը:

Այցելությունից հետո հյուրերը, Տ. Էմիլիան եպիսկոպոսի առաջնորդությամբ, գնացել են Վըլենի Մուրեշ ծխական եկեղեցին, որտեղ հավատացյալ խուռներամ ժողովրդի ներկայությամբ տեղի է ունեցել երեկոյան ժամերգություն, որի ավարտին բարի գալստյան և ողջույնի ջերմ խոսքեր են փոխանակել Տ. Էմիլիան և Տ. Տիրայր սրբազանները: Ռումեն եպիսկոպոսը իր խոսքում խանդավառությամբ է արտահայտվել 1983 թվականի աշնանը Մայր Աթոռում տեղի ունեցած մեռնօրհնության և Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի գահակալության հանդիսությունների առթիվ Ս. Էջմիածին կատարած իր այցելության մասին որպես ռումեն օրթոդոքս եկեղեցու պատվիրակության անդամ՝ շեշտելով Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ կատարված վերանորոգչական և շինարարական հսկայական աշխատանքները և Մայր Աթոռի ծաղկումն ու բարգավաճումը:

Իր պատասխան խոսքում Տ. Տիրայր արքեպիսկոպոսը վեր է հանել հայ և ռումեն ժողովուրդների դարավոր բարեկամությունը՝ ամրապնդված փոխադարձ սիրո և հարգանքի շաղախով:

Ավելի ուշ, նույն եկեղեցու խորհրդի նախագահ պրն. Ժուտե Իոան իր ընտանեկան հարկում հյուրասիրել է հայ և ռումեն բարձրաստիճան հոգևոր հայրերին:

Հետևյալ օրը հայ հյուր հոգևորականները, ռումեն եպիսկոպոսի առաջնորդությամբ, այցելել են Մուրեշ նահանգի Պիստրա Տետա ծխական եկեղեցին, ապա նույն օրը երեկոյան մեկնել են դեպի Թըրկու Մուրեշ քաղաքը, որտեղ այցելություն են տվել քաղաքի երկու գլխավոր եկեղեցիներին:

Այցելության վերջին օրը հատկացվել է Ալպա Յուլիա առաջնորդանիստ քաղաքի և Ռըմեց կուսանաց վանքի այցելություններին: Սույն վանքի հիմքը դրվել է 1377 թվականին: Հյուրերը մայրապետ Երուսալիմա Կիպուի առաջնորդությամբ այցելել են վանքի մատուռը, եկեղեցական թանգարանը, գորգագործության արհեստանոցը և այլ բաժիններ՝ մեծապես գնահատելով ժրաջան հոգևոր քույրերի եռանդուն աշխատանքն ու նվիրյալ ոգին:

Հուլիսի 26-ին, հինգշաբթի օրը, երկու սրբական հայրերը ներկա են եղել Ալպա Յուլիայի առաջնորդանիստ եկեղեցում մատուցված ս. պատարագին:

Ռումինիայի հայոց թեմական առաջնորդը այցելել է նաև նորակառույց առաջնորդարանը, եկեղեցական թանգարանը և քաղաքի մի քանի տեսարժան վայրեր:

Եղբայրական սույն այցելությունը, որ արտահայտությունն է հայ և ռումեն ժողովուրդների դարավոր բարեկամության, առավել սերտացնում և ամրացնում է երկու քույր եկեղեցիների հարաբերությունները ավետարանական անկեղծ սիրո և փոխադարձ հարգանքի կապերով: Ռումինահայոց թեմի հոգևոր առաջնորդը ամենուրեք գնահատանքի ջերմ խոսքեր է լսել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հեղինակավոր անձի և Նրա կատարած մեծ գործի մասին:

* * *

Ինչպես ամեն տարի, այս տարի նույնպես, օգոստոս ամսին, Ս. Աստվածածնա տոնի առթիվ տեղի է ունեցել բազմամարդ մի ուխտագնացություն դեպի Հաճկատարի Ս. Աստվածածնա վանք: Ուխտագնացությանը մասնակցել են ավելի քան հազար հավատացյալներ՝ ռումինահայեր և արտասահմանի տարբեր վայրերից ժամանած ուխտավորներ: Այս առթիվ կատարվել են հատուկ հանդիսություններ. նշվել է Սուչավայի հայկական դպրոցի հիմնադրման 160-ամյակը, օրհնվել է Հաճկատար վանքի մուտքի նոր դուռը, տեղի է ունեցել վերաբացումը Սուչավա քաղաքի հնադարյան Զամքա վանքի, որտեղ կատարվել է եկեղեցական արարողություն:

Երեքօրյա ուխտագնացությունն սկսվել է

Ուխտավորների խումբը Հաճկատարի վանքում աղոթքի պահին

օգոստոսի 11-ին, շաբաթ օրը, առավոտյան: Այդ օրը Սուչավայի Ս. Խաչ եկեղեցում, Ս. Էջմիածնի Շողակաթի տոնի առթիվ, պատարագ է մատուցել տեղի հոգևոր հովիվ Տ. Արամայիս վարդապետ Շլուկյանը: Պատարագի սրբական արարողությանը ներկա է եղել Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը:

Նույն օրը, երեկոյան, Ս. Խաչ եկեղեցում, առաջնորդ սրբական հոր նախագահությամբ, կատարվել է կիրակամտի ժամերգություն: Հավարտ ժամերգության Տ. Տիրայր արքեպիսկոպոսը արտասանել է մի հակիրճ քարոզ՝ ընդգծելով կրոնական և ազգային ավանդությանց տեղը հայ ժողովրդի կյանքում և միաժամանակ վեր հանելով Ս. Էջմիածնի դերն ու նշանակությունը սփյուռքի պանդուխտ հայության համար: Իր խոսքի ավարտին սրբական հայրը իր գնահատանքն է

արտահայտել տեղի հոգևոր հովվի նկատմամբ, որի ժրաջան աշխատանքի շնորհիվ հնարավոր է եղել կազմակերպել սույն բազմամարդ ուխտագնացությունը լավագույն պայմաններում:

Օգոստոսի 12-ին, կիրակի օրը, առավոտյան, հավատացյալ ուխտավորների բազմությունը, Տ. Տիրայր արքեպիսկոպոսի և Տ. Արամայիս վարդապետի առաջնորդությամբ, եկեղեցու զանգերի ղողանջների ներքո, թափորով, խաչով ու խաչվառներով բարձրացել է բլուրն ի վեր՝ դեպի Հաճկատարի վանք: Այստեղ առաջնորդ սրբազանը կատարել է Հաճկատար եկեղեցու մուտքի նոր դռան օրհնության հանդիսավոր արարողությունը: Դուռը պատրաստվել է Տ. Արամայիս վարդապետի և սուչավաբնակ Միհալչա ընտանիքի նվիրատվությամբ: Դռան քանդակները կատարվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնում պատրաստված նախագծերի հիման վրա՝ հայաոճ խաչով և հայկական նախշերով:

Այնուհետև Ս. Աստվածածնի տոնի առթիվ եկեղեցում ս. պատարագ է մատուցել Տ. Տիրայր արքեպիսկոպոսը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Արամայիս վարդապետը ռումիներեն թարգմանությամբ կարդացել է Բուխարեստում տեղի ունեցած խաղաղության կոնֆերանսին առաջնորդ սրբազանի արտասանած խոսքը:

Ս. պատարագի ավարտին տեղի է ունեցել մատաղի օրհնություն, և բոլոր ուխտավորները հրավիրվել են սիրո սեղանի:

Հետևյալ օրը, օգոստոսի 13-ին, ուխտավորների խումբը ներկա է գտնվում Զամքայի վանքի վերաբացման հանդիսավոր արարողությանը: Այս վանքի եկեղեցու դռները, երկար տարիներ փակված մնալուց հետո, վերստին բացվել են հավատացյալների առաջ: Այստեղ 1401 թվականին Մոլդավիայի իշխան Ալեքսանդր Բարին հաստատել է առաջին հայ առաջնորդարանը:

Տ. Տիրայր արքեպիսկոպոսը այս առթիվ գնահատանքի ջերմ խոսք է ասել Տ. Արամայիս վարդապետի նվիրյալ աշխատանքի համար, որի փայլուն արտահայտությունն է վանքի ներկա բարեկարգ վիճակը:

Ապա առաջնորդ սրբազան հոր նախագահությամբ տեղի է ունեցել հոգեհանգստյան արարողություն, որին հաջորդել է հոգեճաշ Սուչավայի նախկին հայկական դպրոցի սրահում:

## ԼՈՒՐԵՐ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ

Սույն թվականի ապրիլի 22-ին, կիրակի օրը, սուրբ Զատկի առավոտյան, սուրբ պատարագով, քարոզով և հատուկ հանդիսությամբ տեղի է ունեցել Ապրիլյան մեծ Եղեռնի հայ նահատակներին նվիրված հուշարձանկոթողի բացումը Վիեննայի հայոց Ս. Հռիփսիմե եկեղեցու շրջափակում:

Հավարտ պատարագի, հուշարձանի մոտ կատարվել է հոգեհանգստյան արարողություն, որին մասնակցել են բազմաթիվ վիեննահայեր: Այդ առթիվ բովանդակալից մի ճառով հանդես է եկել Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Վիեննայի հայոց հոգևոր հովիվ Տ. Մեսրոպ ծայր. վարդապետ Գրիգորյանը: Իր ելույթում նա նշել է, որ վիեննահայ համայնքի երկար տարիների ցանկությունը վերջապես իրականություն է դարձել 1915 թվականի ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված մի հուշակոթողի կառուցմամբ և հույս է հայտնել, որ այդ հուշակոթողը ներշնչման աղբյուր և միաժամանակ միության և միասնականության խորհրդանիշ կհանդիսանա ներկա և գալիք սերունդների համար: Ելույթներ են ունեցել նաև Վիեննայի հայոց եկեղեցու վարչության ատենապետ Աստիկ Աստվածատրյանը և վիեննահայ մի շարք ազգայիններ:

Կեսօրին համայնքի անդամների ու արտասահմանից ժամանած հյուրերի համար «Լուկեք» ռեստորանում կազմակերպվել է «սիրո ճաշ»:

Նույն օրը, երեկոյան, «Ուրանիա» Ժողովրդական Կրթության Կենտրոնի սրահում տեղի է ունեցել Ապրիլյան Եղեռնի 69-րդ տարեդարձին նվիրված մի հուշահանդես: Գործադրության է դրվել գեղարվեստական մի ճոխ հայտագիր. խոսվել են ճառեր և կատարվել արտասանություններ: Ավստրիայի ճանաչված ասմունքող Հերբերտ Պրոբստը ներշնչումով կարդացել է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպից հատվածներ, ինչպես նաև խոր ապրումով արտասանել է Սիլվա Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» և Սիամանթոյի «Պարը» քերթվածները գերմաներեն լեզվով:

* * *

Վիեննահայ գաղութի կարևոր աշխատանքներից և ձեռք բերած հաջողություններից մեկը պետք է համարել նաև բանաստեղծ Հովհաննես Շիրազի անունը կրող հայկական

վարժարանը, որը 1981 թ. նոյեմբերից ի վեր գործում է Վիեննայի հայոց եկեղեցական վարչության հովանավորության և վերին պատասխանատվության ներքո: Վարժարանում ջուրջ 50 հայ աշակերտ-աշակերտուհիներ, 6-ից մինչև 16 տարեկան, կանոնավոր և լուրջ կերպով սովորում են մայրենի լեզուն, հայերեն երգեր, հայոց պատմություն, հայ գրականություն և դաստիարակվում են ազգային հայրենասիրական ոգով: Բացի ընթացիկ դասերից, տարվա ընթացքում վարժարանը կազմակերպում է զանազան հավաքույթներ, տոնակատարություններ և այցելություններ: Պաշտոնական խնամակալ մարմինը՝ Ծնողական Խորհուրդը, հոգ է տանում դպրոցում նյութական և բարոյական բոլոր կարիքներին:

* * *

Հուլիսի 9—14 օրերին Վիեննայում է գտնվել հայ կաթողիկե համայնքի Պատրիարք-Կաթողիկոս Հովհաննես-Պետրոս ԺԸ Գասպարյանը: Հուլիսի 10-ին հայ կաթողիկե Պատրիարքը պաշտոնական այցելություն է տվել Հայոց Կենտրոն: Ապրիլյան Եղեռնի նորակառույց հուշարձանի մոտ նա իրեն ընկերակցող հոգևորականների հետ կատարել է հոգեհանգստյան պաշտոն վասն բյուրավոր հայ նահատակների հոգիների խաղաղության: Հավարտ արարողության, Հովհաննես-Պետրոս ԺԸ Պատրիարքը ընդունվել է Վիեննայի հայոց Ս. Հռիփսիմե եկեղեցու սրահում, որտեղ բարձրաստիճան հյուրին և նրան ընկերակցող հոգևորականներին ողջունել և բարի գալուստ է մաղթել Տ. Մեսրոպ ծայր. վարդապետ Գրիգորյանը:



ԱՐՇԱԼՈՒՅՍ ՂԱԶԻՆՅԱՆ

# ՆԵՐԲՈՂԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

## 5

Ներբողագրության մեջ մեծ է Գրիգոր Նարեկացու (951—1003) ավանդը: Նա ներբողը հասցրեց գեղարվեստական այնպիսի մակարդակի, որից այն կողմ մի քայլ էր մընում անձնական քնարերգության համար: Պատմողական տարրի ճարտասանական ընդլայնումը Նարեկացին տալիս է բանաստեղծական հպոր երևակայությամբ, ստեղծում գեղեցիկ մակդիրների և փոխաբերությունների մի շքեղ շղթա, ուր հնչյունական հարուստ հանգիտությունը արտակարգ երաժշտականություն է հաղորդում խոսքին, որը հաճախ վերածվում է կանոնավոր ռիթմիկ միավորների, երբեմն էլ նույնիսկ հանգավոր բանաստեղծության: Նրա ներբողներին քնարականությունից բացի բնորոշ է խոհական-իմաստասիրական երանգը: Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված վարքագրական ներբողի մեջ Նարեկացին աշխարհը համարում է մի ծով, որը ծփում է ոչ թե ջրեղեն ալիքներով, այլ մեղքերից պղտոր՝ վանական պատահարներով, ուր անվերջ բախվում են ներհակ զգացումները՝ հակառակորդ զորագնդերի նման: «Զաշխարհ իւրայովքս պատկեր ծովու ծփեալ ի բազմաց,—գրում է նա,—ոչ լուծական ալեօք կոծեցեալ, այլ ի վանական պատահմանց շարժեալ, ախտիւ զայրացեալ, մեղօք պղտորեալ, յեղանակօք այլայլեալ և ընդդիմակաց ներհակօք կիրեարս բախեալ. ոմն յաղթէ և ոմն պարտի, փախնու, արշաւէ յապաւէնն սահման և անդէն ցրին, քակտին, լուծանին: Իբրև ալիւք վանական ալգաց կուր խռովելոց յերկրէ կորուսեալ անշնչապէս բարբառին, անձայն աղաղակեն, անխորհրդաբար խիլախեն. կեան և ոչ երևին, գոն և ոչ էանան, են և ոչ ճանաչին, մնան և ոչ տեսանին»[71]:

Նարեկացին հոգևոր բարեմասնությունների գովասանությունը զգալիորեն թոթափեց վերացականությունից և ճշմարիտ բանաստեղծականություն հաղորդեց նրան: Նարեկացու մակդիրն արտահայտում է առարկայի կամ երևույթի իրական հատկանիշ, որը միայն փոխաբերաբար է անցնում այլ հասկացության: Առարկայի մակդիրը ոչ թե վերացարկում է այն, կտրում իրականությունից, այլ, ընդհակառակն, զարմանալի դիպուկությամբ նշում է հենց այդ կապը: Ահա մի հատված Աստվածածնին նվիրված նրա ներբողից:

Ցողոյն հանդարտի ամպ անձրևաձիր,
Արևուն ծագման ակն արփիափայլ,
Մերկացելոյ այգոյն աստղ առաւօտի,
Գիշերայն մթոյն խօսնակ բերկրանաց[72]:

Եվ, վերջապես, Նարեկացուն հատուկ է բնության կենդանի զգացողությունը: Առհասարակ բնության գեղեցկության գովքը ներբողների մեջ նպատակ չէ, այլ միջոց՝ հոգևոր նշանակության դիտանկյունից կրոնական մտքեր և զգացումներ արտահայտելու համար: Նարեկացու նախորդներից իր ներբողներում բնության երևույթների պատկերմանը

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1984 թվականի № 2-ից:

[71] **Գրիգոր Նարեկացի,** Մատենագրութիւնք, էջ 446:

[72] Նույն տեղում, էջ 415:

մեծ տեղ է տվել Մովսես Խորենացին: Նրա «Յաղագս Վարդավառին խորհրդոյ» ներբողը համակված է լույսի և արևի, ջրի ու ծաղկի հին պաշտամունքի ցնծությամբ: Վարդավառը հեթանոսական տոն էր: Հեթանոս հայերը վարդեր են նվիրել ջրի դիցուհուն՝ Աստղիկին, ջուր են ցանել իրար վրա, հրճվել: Եկեղեցին վերափոխել է տոնը և Վարդավառը նույնացնելով Քրիստոսի պայծառակերպության հետ՝ նոր իմաստ տվել նրան: Խորենացին ներբողը սկսում է տոնի խորհրդի փառաբանությամբ. «Լուսատոր և պայծառ է խորհուրդ մերձաւոր տօնիս, և տիեզերական ցնծութեան աւետիս հնչեցուցանէ ընդ երկնաւս»[73]: Համատարած ցնծություն է ողջ տիեզերքում: Պայծառ, պայծառ է Վարդավառի արեգակը: Հրաբորբ շողերով նա վանում է հյուսիսի պաղ շունչը, հարավի տաք շունչը սփռում ամենուր, կյանք տալիս ծառ ու ծաղկին, գեղեցկացնում երկիրը: Մինչդեռ արդարության արեգակը, հավատի խորանից փայլելով բոցավառում է հավատացյալներին հոգեռանդ հրով՝ նրանց մեջ կենդանագրելով աստվածային լույսի տիպարը: Իրական արեգակ՝ կյանքի, բնության վերածնության ակունք, արդարության արեգակ՝ հոգու կենդանության, հոգու հարության աղբյուր,—ահա այն կուգահեռը, որի մեջ խտացված է ներբողի գաղափարական իմաստը: Առաջնայինը, ինչպես տեսնում ենք, հոգևորն է, բնության երևույթը համեմատության եկր է միայն և ոչ թե բնության զգացողության կենդանի հույզ: Մինչդեռ Նարեկացին տալիս է արդեն բնության անձնավորման օրինակներ: Խաչին նվիրված իր ներբողում նպատակ դնելով «համբաւել զճշմարտութեանս պայծառութիւն խորհրդոյ խաչիս զօրութեան», նա այն միտքն է հայտնում, որ, եթե ծառերը «վայելչական և բերկրապատարն խնդութեամբ», «հոգեպէս ցնծան»[74] ծանուցելով արարչի հայտնության մասին, ապա մարդիկ պիտի ծնրադիր, գեղեցիկ դեմքերը հողին հպած՝ երկրպագեն խաչին: Եվ ահա բանաստեղծական պատկերը. «Զմայրն ընդ նոճոյն և զսարդն ընդ սօսւոյն՝ ի պատճառ փառաց մեծին Աստուծոյ վերանուագեն»[75]: Այստեղ արդեն նշմարվում է բնության այն զգացողությունը, որ այնպես գեղուն դրսևորվել է Նարեկացու մի քանի տաղերի մեջ: Նարեկացու ստեղծագործությամբ սկսվում է գրականության զարգացման նոր շրջան, և այդ շրջանի առաջին մեծ բանաստեղծն է նա:

[73] **Մովսես Խորենացի**, Մատենագրութիւնք, էջ 335:
[74] **Գրիգոր Նարեկացի**, Մատենագրութիւնք, էջ 391:
[75] Նույն տեղում, էջ 399:

## 6

Հայ գրականության զարգացման երկրորդ շրջանում (11—17-րդ դդ.) ներբողագրությունն ապրում է նոր վերելք, որն իր բարձրակետին է հասնում 13-րդ դարում: Հարատևում և շարունակվում են ներբողի բոլոր տեսակները: Առանձնապես ծաղկում են ներբողական վարքերը, որոնց մի մասն ունի պատմական բնույթ: Ներբողներ են նվիրվում անցյալի հայ մշակույթի և գրականության, Հայ Եկեղեցու և պետության մի շարք գործիչների՝ Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթևին, Տրդատ Մեծին, Գրիգոր Լուսավորչին, Հովհան Օձնեցուն, Գրիգոր Նարեկացուն, Ներսես Շնորհալուն, Ներսես Լամբրոնացուն, Գրիգոր Տաթևացուն և այլն: Պատմական անձնավորություններին ներբողելիս գրեթե չեն անդրադառնում նրանց կյանքի մանրամասնություններին, հիշատակում են հիմնական գործը, ծանրանում բարոյական առաքինության դրվատման վրա՝ հաճախ դիմելով աստվածաշնչական կերպարների հետ համեմատություններ, զուգահեռներ անելուն: Ի տարբերություն այդ ներբողների՝ պատմական ծանոթ, ժամանակակից անձերին նվիրված ներբողներում տիրապետում է կենսագրական փաստերի հավաստիությունը, անհատականության գծերը, ճշմարտացի պատումը: Նկարագրությունները դառնում են կուսպ, բնական, համոզչականությունը վերածվում է ստեղծագործական պահանջի:

Դեպքերի անակնկալ շրջադարձերը միշտ չէ, որ բացատրվում են նախախնամությամբ: Ներբողագիրն արդեն աշխատում է թափանցել պատճառների մեջ: Վարքագրական և դամբանական ներբողները հող նախապատրաստեցին կենսագրական ակնարկի, գրական դիմանկարի, հոբելյանական մեծարանքի, մահախոսականի ձևավորման համար:

Ներբողագրության զարգացմանը նպաստեց նաև Գրիգոր Վկայասերի, Ներսես Շնորհալու և ուրիշների թարգմանական գործունեությունը: Թարգմանվեցին քրիստոնեական Եկեղեցու հայրերի վարքերը, ներբողները, ճառերը: Սրբախոսական գրականությունը զարգանում էր գրականության ընդհանուր վերելքին զուգընթաց: Նոր թափ է ստանում կրոնուսուցողական ներբողագրությունը: Այստեղ, սակայն, նկատելի է գեղարվեստական որոշակի նահանջ, նյութն ինքնին վերացական էր, և ներբողագիրները հաճախ կաղապարում են հին ոճերն ու դարձվածները, դավանախոսական բանաձևերը, մշտական մակդիրները և այլն: Խոսքը դառնում է առավել սրիեստական, ճարտասանությունը՝ առավել սնամեջ: Եվ, այնուամենայնիվ, կրոնական

սրբություններին նվիրված այդ բնույթի ներբողների մեջ ևս կան գործեր, որոնք ունեն գրական ու գեղարվեստական արժեք: Դրանցից են, օրինակ, Գրիգոր Մագիստրոսի՝ Խաչին նվիրված չափածո ներբողը[76], Ներսես Շնորհալու՝ հրեշտակապետներին և երկնային զորություններին նվիրված արձակ ներբողը՝ «Մաղթանք առ սուրբ հրեշտակսն» չափածո խնդրվածքով[77], Ներսես Լամբրոնացու «Ներբողեան ասացեալ ի հրաշափառ գալուստ Հոգւոյն Սրբոյ»[78], «Բարեբանութիւն ներբողական գովութեամբ ի Համբարձումն տեառն Յիսուսի Քրիստոսի յերկինս»[79] ներբողները և այլն: Վերջինիս բնորոշ է դրամատիկ լարվածությունը. գործող անձանց երկխոսությունները մեծ տեղ են բռնում տեսարանները հաջորդում մեկը մյուսին և, ինչպես Մ. Աբեղյանն է գրել, «...ամեն ինչ շարժվում է, կարծես մի վեպ է պատմվում դրամատիկ ձևով. ամբողջը կապվում է մի մեծ գործողություն, արագ ու եռանդուն ընթացքով»[80]: Աբեղյանի դիտողությունը, թե «այս գրական տեսակը մնացել է նույն հին կրոնական ներբողյանը, բայց փոխվել է ձևի և ամբողջ հորինվածքի գեղեցկությամբ»[81], ընդհանրացնող արժեք ունի 12—13-րդ դարերի ներբողագրության համար: Կրոնական ներբողները, սակայն, թույլ են և սակավարժեք: Ներբողի այդ տեսակը հարատևել է նաև ուշ միջնադարում: Դրանց մի մասը չափածո գործեր են: Գաղափարական իմաստով հին ներբողից պահպանվել է մի հատկանիշ՝ կրոնուսուցողական տարրը: Աստվածածին կույսին նվիրված ներբող է գրել Մխիթար Սեբաստացին (1676—1749)[82], խաչին նվիրված՝ Հովհան Վանանդեցին (1772—1840)[83]:

Թեմատիկ առումով այս բնույթի ներբողներից են Էջմիածնին ձոնված գովերգները: Դրանք առանձնապես բազմացան 15-րդ դարից՝ սկսած 1441 թվականից, երբ հայոց կաթողիկոսարանը Սսից տեղափոխվեց Վաղարշապատ՝ իր բնօրրանը: Այդ շարքի հիշարժան գործերից առաջինը Առաքել Բաղիշեցու (մահ. 1454) «Էջմիածին, ժողովարան» սկզբնատողով գովեստն է[84], վերջիններից՝ Աբրահամ Աստապատցու (մահ. 19-րդ դարի սկզբին) «Ներբողեան սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» ծավալուն արձակ ներբողը[85]: Էջմիածնին նվիրված գործերին բնորոշ են հայրենասիրական շունչը, Հայ Եկեղեցու՝ իբրև հայ ժողովրդի ազգապահպանման դերի դրվատանքը: Ըստ Աբրահամ Աստապատցու՝ Էջմիածինը հայ ժողովրդի կյանքի արյան շրջանառության կենտրոնն է, ինչպես սիրտը՝ մարմնի. «Եթէ խափանեսցի սոյն այս գործողութիւն, անկարծիք մեռանի ըստ հոգւոյ և ըստ հաւատոյ՝ ազգն Հայոց»[86]:

Ավելի հարուստ և բազմազան են դառնում ներբողական վարքերը: Ինչպես ասացինք, նրանց մի մասն ունի պատմական բնույթ: Այստեղ ևս քիչ չեն չափածո գործերը: Չափածո են գրված, օրինակ, Առաքել Բաղիշեցու «Ներբողեան տաղաչափական ի վերայ վարուց Մեծին Ներսէսի»[87], Ներսես Լամբրոնացու «Գովեստ ներբողական պատմագրական բանիւ յաղագս վարուց մեծի հայրապետին տեառն Ներսիսի Կլայեցւոյ Հայոց կաթողիկոսի»[88], Ներսես Մոկացու «Ներբողեան գովեստի չորեցունց արանցն, որք եղեն սկիզբն Անապատի կարգիլ յաղագս մեր»[89], ծավալուն ներբողները, որոնք արդեն կարելի է համարել պոեմներ: Այս բնույթի գործեր են գրվել նաև ուշ միջնադարում: Գեղարվեստական տեսակետից դրանց մի մասը չափածո գովասանություններ են՝ առանց բանաստեղծական խանդի, հաճախ նմանողություն, թույլ և անավյուն: Դրանք, որպես կանոն, նվիր-

---

[76] «Ներբողեան ի սուրբ խաչն Քրիստոսընկալ», տես «Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունւոյ», Վենետիկ, 1868, էջ 80—88:

[77] «Տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի գովեստ բանի ներբողականի յաղագս տօնի գերագունից հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի և ամենայն երկնային զօրութեանցն, զոր տօնեն եկեղեցիք Քրիստոսի ընդ տիեզերս համախմբեալք ուրախութեամբ», Կ. Պոլիս, 1808: Չափածո «Մաղթանքը» տես նաև «Բանք չափաւ», էջ 249—284:

[78] «Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ նամականի», Վենետիկ, 1865, էջ 290—326:

[79] Նույն տեղում, էջ 249—289:

[80] **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 166:

[81] Նույն տեղում, էջ 167:

[82] «Կրթութիւն աղօթից ընդ որում և շարակցի ոտանաւոր այբենական առ ամէնօրինեալ կոյսն. շարադրեցեալ ի Մխիթարայ Սեբաստացւոյ», Վենետիկ, 1718, էջ 195—239:

[83] «Ճառ ներբողեան ի սուրբ խաչն Քրիստոսի...» Կ. Պոլիս, 1852:

[84] Մատենադարան, ձեռ. № 2672, էջ 253ա—254բ:

[85] «Ճառ ներբողական ի վերայ քրիստոսահիմն և աստուածակերտ Աթոռոյն սրբոյ Էջմիածնի», Կ. Պոլիս, 1807:

[86] Նույն տեղում, էջ 52:

[87] «Պատմութիւն երջանիկ վարուց և մահուան երանելի առն Աստուծոյ սրբոյն Մեծին Ներսէսի», Կ. Պոլիս, 1737, էջ 223—243:

[88] **Ներսէս Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, Էջմիածին, 1865, էջ 461—497:

[89] **Ներսես Մոկացի**, Բանաստեղծություններ, Երևան, 1975, էջ 44—63:

ված են հին ու նոր, անցյալի և ժամանակի կրոնական ու մշակութային գործիչներին: 16—17-րդ դարերի ներբողագրության մեջ քիչ թե շատ ուշագրավ են Գրիգոր Կեսարացու «Ներբողեան ներչափական բանիւ առ մեծ Ռաբունապետն Սրապիոն»[90], Մինաս Թոխաթցու «Գովասանք ի Գրիգոր վարդապետն»[91], Ղապար Թոխաթցու «Գովասանք Կարապետ արքեպիսկոպոսին»[92], Ղապար Բաբերդցու «Գովասանութիւն վարդապետաց»[93], Ստեփանոս Թոխաթցու «Գովասանութիւն Կաֆայու քահանայից վերայ»[94], ինչպես նաև Հովհաննես Կաֆացու «Ողբ ի մահն Խասպէկ քահանային»[95] և նույն Խասպեկ բանաստեղծ քահանայի մահվան առթիվ Սիմեոն Կաֆացու «Ի վերայ մահուան Խասպէկ քահանայի»[96] և մի քանի այլ գործեր: Այդ գործերի մեջ, բանասեր Հ. Սահակյանի բնութագրմամբ, գովաբանվող գործչի բարոյական հատկանիշները «լիովին համընկնում են քրիստոնեական բարոյախոսության դրույթներին», սակայն փառաբանվող անձանց գործունեությունը «գնահատվում է կոնկրետ պատմական իրադրության մեջ ապրող մարդու մտորումների ու հոգեբանական չափանիշների տեսակետից»[97]:

Առավել սակավարժեք են պատմական այն ներբողները, որոնք նվիրված են Եկեղեցու հեռավոր անցյալի սրբացված հայրերին: Նշենք միայն երկուսը. «Ի սրբական հայրն մեր երանելին Գրիգորիոս, Պաղտասար պարտաւոր Դպրի ասացեալ ի թուին ՌՃԾԸ» (1709 թ.)[98] և «Բան ներբողեան առ սուրբն Կիւրեղ»[99]: Պաղտասար Դպրի (1683—1767) այս երկու ներբողներն էլ տաղտկալի և երկարաշունչ ոտանավորներ են և այլ բան չեն արտահայտում, քան այն, որ Լուսավորչի բարեխոսությամբ Աստված օգնության փութա «ցրուեցելոց և մեր տառապեալ հօտին»:

Պատմական արձակ ներբողների մեջ գեղարվեստական արժանիքներով և բովանդակության հարստությամբ սռանձնանում են Կարապետ Սասնեցու (11- 12-րդ դդ.)՝ Մեսրոպ Մաշտոցին[100] և Վարդան Արևելցու (1203—1271)՝ Մեսրոպ Մաշտոցին, գրերի գյուտին, Սահակ Պարթևին և թարգմանիչներին[101] նվիրված ներբողները: Երկու հեղինակներն էլ պատմական նյութն օգտագործում են հայրենասիրական զգացումներ արծարծելու, ժամանակակիցներին ազգային հպարտության և լավատեսական հեռանկարով տոգորելու համար: Նրանք, միաժամանակ, հանդես են բերում պատմության մեջ Մեսրոպ Մաշտոցի, նրա գյուտի և թարգմանիչների խաղացած դերի ու նշանակության ճիշտ ըմբռնում և գնահատություն: Նրանք ներբողում են անցյալը՝ հանուն ներկայի: Երախտագիտական նրանց խոսքի մեջ արտացոլվել է նաև ժամանակակիցների վերաբերմունքը Մաշտոցի և նրա գործի նկատմամբ: Դարերի հեռվից արդեն ավելի հստակ է գնվում Մաշտոցի և նրա գինակիցների գործունեության կարևորությունը հայ ժողովրդի քաղաքական, մշակութային և հոգևոր կյանքում:

Սասնեցին օժտված հեղինակ է: Նա հմուտ է ներբողի հերինվածքի գաղտնիքների մեջ և գիտակցաբար պահպանում է նրա ոճակառուցվածքային բոլոր հատկանիշները, իսկ շեղվելու դեպքում՝ զգուշացնում. «Բայց կարծեմ ստերիւրեցայ յոճոյն և վարտուղի ելայ ի կարգէն այսպիսեօք բարգաւաճել զսուրբս»: Ներբողագրի նրա վարպետությունն առանձնապես ցայտուն է դրսևորվել Մաշտոցի մարդկային և հոգևոր առաքինությունների նկարագրման մեջ: Եթե նախորդների մեծության վկայություններից մեկն էլ այն է, որ նրանք առաքինության օրինակ են դառնում հետնորդների համար, ապա, ըստ Սասնեցու, ոչ ոք չի գերազանցում Մաշտոցին. «ոչ ոք ի ծայրագունիցն գերազանցէ զսա», մանավանդ որ նա արհամարհեց պալատ ու պաշտոն, փառք ու պատիվ, գանձ ու հարստություն, «զոր յիմարեալքն յաստիս ըղձանան ստանալ և երանի տան ունողացն» և նախընտրեց բարոյական կատարելագործման ուղին: Սասնեցին միանգամայն իրավացի է Մաշտոցի գյուտի նշանակությանը տված իր գնահատականի մեջ. «Քև երանելի եղև աշխարհս մեր, պերճ և պայծառ յայգս և յա-

---

90 Տ. Պալյան, Հայ աշուղներ, Բ գիրք, Իզմիր, 1914, էջ 209—216:

91 Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 111—112:

92 Մատենադարան, ձեռ. № 10050, էջ 364ա—365բ:

93 «Հանդէս ամսօրեայ», 1968, էջ 299—301:

94 «Ազգագրական հանդէս», 1902, 9-րդ գիրք, էջ 71—72:

95 «Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 204:

96 «Հանդէս ամսօրեայ», 1935, էջ 343—344:

97 Հ. Սահակյան, Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, Երևան, 1975, էջ 63:

98 «Գիրք որ կոչի «Յաճախապատում», Կ. Պոլիս, 1824, էջ 372—383:

99 Կիւրեղ Ալեքսանդրացի, Գիրք պարապմանց, Կ. Պոլիս, 1717, էջ 518—523:

100 «Կարապետ եպ. Սասնեցւոյ՝ ներբողեան յաղագս վարուց և մահուան ս. վարդապետին Մեսրոբայ», Վաղարշապատ, 1897:

101 «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 377—397: Տես նաև «Սոփերք», հ. Բ, Վենետիկ, 1853, էջ 5—42: Նաև՝ Մատենադարան, Ձեռ. № 8775, էջ 279բ—300բ:

վինս, ճոխ եկքս և օտարքս, անպարտելի թագաւորս և զօրքս՝ ի հաւատս և ի հոգիս. աստուածապան հայրապետս և գեր ի վերոյ պսակեալ փառօք Եկեղեցիս»[102]: Ներբողն ա-վարտվում է այբբենակարգ մի գովեստով, որն ըստ էության արձակ բանաստեղծություն է և, առանձին վերցրած, կարելի է համարել Մաշտոցին ձոնված լավագույն գործերից մեկը հայ քնարերգության մեջ:

Մաշտոցին և նրա վինակիցներին նվիրված պատմական ներբողների բարձրակետը կարելի է համարել Վարդան Արևելցու «Բան գովեստի պատմագրաբար վասն Սրբոյն Սահակայ և Մեսրոպայ և այլոց թարգմանչացըն» ներբողը, որը բանասեր Փ. Անթաբյանի բնորոշմամբ՝ «ամբողջությամբ տոգորված է բանաստեղծական ջերմ շնչով, հայրենասիրական ներհուն թախիծով, բուռն հույսերով և լավատեսությամբ»[103]: Արևելցին ձգտում է բարձրանալ մասնակի երևույթներից և գրերի գյուտի նշանակությունը փորձում է իմաստավորել պատմահասարակական և քաղաքական կյանքի, հայ ժողովրդի և նրա մշակույթի տեսանկյունից: Գրերի գյուտն անհատի ջանքերի արգասիք չէր լոկ, այլ՝ ժամանակի ծնունդ: Այլ էր երկիրը, գրերի գյուտից առաջ, ավեր ու խավար, այլ՝ գյուտից հետո, երբ «տարածեցաւ լոյսն, ծաւալեցաւ ճառագայթն»[104]: Արևելցին մեծ վարպետությամբ ողբը ներհյուսում է ներբողի ընդհանուր կառուցվածքին՝ խոսքը դարձնելով առավել ներգործուն, գաղափարը՝ հստակ: Թարգմանիչները վերադարձել են Հայաստան: Ինչ նեղություններ ասես, որ չեն կրել ուսման տարիներին, օտարության մեջ, ինչ հույսերով են եկել և ինչ են տեսնում. ուսուցիչներ չկան, երկիրը՝ օտարի լծի տակ, դատավորները՝ աչառու, «վասն որոյ մատնեցաք ի ձեռս թշնամեաց մերոց, և ատելիք մեր տիրեցին կմեկ»[105], և ահա նրանք ողբում են այդ վիճակը և հորդորում սթափության, կարթնելու, գործելու. «Ծանիր զպակնութիւն քո. ընդէ՞ր գարշեցար, աղտեղացար, խոտորեցար, մեղկացար, մոլորեցար, մաշեցար ի մեղս, կերար յօտարաց», «Զարթո զկզօրութիւն քո և եկ ի կեցուցանել զմեկ»[106]: Ողբի տարրերի ներհյուսումը ներբողին հայ ներբողագրության յուրահատուկ գծերից է:

Հայ գրականության պատմության մեջ հայոց այբուբենին նվիրված չկա ավելի վսեմ քերթված, քան Արևելցու այս ներբողի այն հատվածը, ուր նա փառաբանում է գիրն ու նրա խորին խորհուրդը. այսպես՝ «Եւ արդ, զի՞նչ ևս ասացից քառիւք զգայութեամբք ի քումդ սպասաւորութիւն: Դեգերին յոլովք բանականք՝ լանին և ունայն են, պարապատին և թափուր են, յագին և սովեալ են: Եւ արդ, զի՞նչ զքեզ կոչեցից, ով գիր, իմանալի՞, թէ՞ զգալի, երկնայի՞ն, թէ երկրայի՞ն, աստուածայի՞ն, թէ՞ մարդկայի՞ն, ժամանակեա՞ն, թէ՞ անմահ»[107]:

Ի տարբերություն պատմական ներբողների, ուր նվազագույնի է հասցված պատմողական տարրը, իսկ ներբողական փառաբանությունը՝ առավելագույնի, ժամանակակից հոգևոր-մշակութային, եկեղեցական, պետական և ռազմական նշանավոր գործիչներին նվիրված ներբողներում մեծ տեղ են գրավում կենսագրական դրվագները, հոգեբանական մանրամասները, ընդլայնվում են հերոսների մարդկային անհատական գծերի, նրանց հոգեկան ապրումների, հաջողությունների և դժվարությունների նկարագրությունները: Քանի որ հեղինակները հաճախ ճանաչել են ներբողելի անձանց և մտերմական կապերի մեջ են եղել նրանց հետ, ուստի նրանք համեմատաբար ազատ են արտահայտում իրենց անձնական վերաբերմունքը, իրենց հիացմունքը ներբողելի անձի գործի, մարդկային բնավորության, հոգևոր բարեմասնությունների և ցավը՝ նրա մահվան, կորստի կամ նահատակության առթիվ: Պատմական հավաստիությունն այդ դեպքում բնական ձևով զուգորդվում է հեղինակի ապրումների անկեղծ քնարականությանը: Առավել հատկանշական են ներբողական վարքերը: Նրանք ձեռք են բերում ոչ միայն պատմական սկզբնաղբյուրի արժեք, այլև գեղարվեստական նոր որակ: Խոսքը վերաբերում է թե՛ արձակ և թե՛ չափածո ներբողներին, ավելին՝ նաև դամբանական ներբողներին: Գաղափարական, աշխարհայացքային առումով՝ այդ ներբողներում արդեն նկատվում է չարիքի, աղետի, կործանման պատճառները իրականության և ոչ թե քրիստոնեական նախաստեղծ մեղքի կամ զուտ բարոյական մոլությունների մեջ փնտրելու միտվածությունը: Բարոյական վերածնության, կատարելագործման պահանջներից բացի՝ ավելի որոշակի է արտահայտվում զուտ քաղաքական ազատության, ժողովրդի անկախության, ազգային միասնության գաղափարը:

Ներբողական այդ վարքերից են Ներ-

---

102 **Կարապետ Սասնեցի**, Ներբողեան, էջ 67:

103 **Փ. Անթաբյան**, Վարդան Արևելցու ներբողը՝ նվիրված հայ գրերի գյուտին, Բանբեր մատենադարանի, № 7, Երևան, 1964, էջ 376:

104 Նույն տեղում, էջ 380:

105 Նույն տեղում, էջ 385:

106 Նույն տեղում, էջ 3863—387:

107 «Բանբեր Մատենադարանի», № 7, էջ 394: Տես նաև՝ «Սոփերք», հ. Բ, Վենետիկ, 1853, էջ 39:

սես Լամբրոնացու՝ Ներսես Շնորհալուն[108], Գրիգոր Սկևռացու՝ Ներսես Լամբրոնացուն[109], Մովսես Երզնկացու՝ Գևորգ Սկևռացուն[110], Դանիել վանականի՝ Մխիթար Սասնեցուն[111], Առաքել Սյունեցու՝ Գրիգոր Տաթևացուն[112], Առաքել Բաղիշեցու՝ Գրիգոր Խլաթեցուն[113], Հակոբ Թոխաթցու՝ Հակոբ Այվաթենցին[114], Ներսես Մոկացու՝ Սյունյաց Մեծ անապատի հիմնադիրներին[115] նվիրված ներբողները և այլն:

## 7

ԺԱ—ԺԷ դարերի ներբողագրության մեջ ուրույն տեղ ունեն դամբանական ներբողները: Ժանրի կրած ներքին փոփոխություններից առանձնապես հատկանշական է ողբական տարրի ներթափանցումը դամբանական ներբողների մեջ: Կան ողբեր, որոնք սերտ աղերսներ ունեն ներբողի հետ և՝ ընդհակառակը: Թվում է՝ հեղինակի համար հավասարապես ընդունելի կարող էր լինել իր երկը կոչել ողբ ներբողական թե դամբանական ճառ, ներբողյան ողբերգական թե տաղ գերեզմանական, եղերերգություն, գովասանություն թե նման այլ բառով: Տարբերությունը ավելի շուտ անվանման մեջ է, քան ձևի և իրական բովանդակության:

Դամբանական ներբողները միշտ չէ, որ գրվել են հերոսի թաղման ժամանակ՝ վշտի անմիջական ազդեցությամբ: Այդպիսի ներբողներ գրվել են նաև ներբողելի անձի հիշատակի մեծարման օրը, մահվան տարելիցի առթիվ՝ ականատեսի, աշակերտի, ընկերոջ, բարեկամի իրենց զգացմունքներն արտահայտելով նրա մասին, ցավելով կորստի, հպարտանալով բարի անվան և գործի համար: Քնարական ապրումների անկեղծության և անմիջականության առումով դամբանական ներբողներն արդեն հասնում են ճշմարիտ բանաստեղծության մակարդակի: Չափածո դամբանականները, ըստ էության, հանդիսանում են այն ակունքը, որից նոր գրականության մեջ ձևավորվեց եղերերգությունը՝ էլեգիան: Արձակ դամբանականից ծագում է մահախոսականը: Դամբանականի առանձին տարրեր լայնորեն օգտագործվել են հիշատակարաններում:

Հայ հին ներբողագրությունը չունի դամբանական ներբողներ: Որոշ վերապահումով՝ դամբանական ներբող է Դավթակ Քերթողի (VII դ.) «Ողբք ի մահն Զևանշէրի մեծի իշխանին» մեծարժեք չափածո ողբը, ուր, Աբեղյանի խոսքերով ասած՝ «գտնում ենք նյութի բաշխումն, մասերի դասավորություն ու մշակում ըստ ճարտասանական արվեստի»[116]: Դամբանական ներբողները ժանրային իրենց հատկանիշներով ավելի կայունանում են ԺԱ—ԺԵ դարերի ներբողագրության մեջ: Ձեռք բերելով իրենց բնորոշ գծերը՝ հանդիսավոր տխրություն, քնարական գովասանություն, քրիստոնեական բարոյախոսություն, այդ ներբողները միաժամանակ ներթափանցված են ողբերի տարրերով, մանավանդ եթե ներբողելի անձը ոչ թե մահացել է, այլ սպանվել, կոիվել, նահատակվել, ողբերգական վախճան է ունեցել: Նման դեպքերում ջնջվում է ողբի և ներբողի ժանրային տարբերությունը: Ավելի ճիշտ՝ տարբերությունը ձևական հատկանիշների, մասերի բաշխման մեջ է, իսկ բովանդակային տարրերը կարող են լինել նույնը:

Ժանրի տարբերակման գիտակցումով է հորինված Գրիգոր Մագիստրոսի «Յաղագս Վահրամայ հօրեղբօր իւրոյ կատարման մարտիրոսութեամբ»[117] դամբանականը: Մագիստրոսի հորեղբայրը՝ Վահրամ Պահլավունին, որ հայոց զորքերի սպարապետն էր, 1047 թ., ութսունամյա հասակում, զոհվում է մարտում: Դա ծանր կորուստ էր, և Մագիստրոսը հուզիչ քնարականությամբ ողբում է նրա մահը: Նա մեծ տեղ է տալիս իր անձնական ապրումներին, անմիջական է և անկեղծ: Իր հորեղբորը տված նրա գնահատությունը խտացնում է մարդու, զորականի, հայրենիքի զավակի և քրիստոնյայի գեղեցիկ կերպար՝ արժանի սրբացվելու: Դամբանականն ուշագրավ է նաև գրականության աշխարհականացման տեսակետից: Վահրամ սպարա-

[108] **Ներսես Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, Էջմիածին, 1865, էջ 461—497:

[109] **Ղ. Ալիշան**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 419—424:

[110] **Ղ. Ալիշան**, Հայապատում, Բ, էջ 504—507:

[111] «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 364—366:

[112] «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն եօթնալոյս վարդապետին», Կ. Պոլիս, 1741, էջ 716—719. խորագիր՝ «Առաքել վարդապետի ասացեալ ներբողեան առ քաջ հռետորն և տիեզերալոյս վարդապետն մեծն Գրիգոր Տաթևացի՝ աշակերտ Յոհաննու Կախիկ կոչեցելոյ»:

[113] **Ա. Ղազինյան**, Առաքել Բաղիշեցի, Երևան, 1971, էջ 205—211:

[114] Մատենադարան, ձեռ. № 10050, էջ 348բ—350բ և նույն տեղում՝ էջ 327ա—330ա:

[115] **Ա. Դոլուխանյան**, Ներսես Մոկացի, Երևան, 1975, էջ 44—63:

[116] **Մ. Աբեղյան**, Երկեր, Գ, էջ 410:

[117] «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, էջ 36—44:

պետի իրական մեծությունը նրա հայրենանվեր գործունեության մեջ էր. «Հայրենասէր և աշխարհաշէն ըստ մերոյն Արամայ»:

Գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություն է նաև Բարսեղ Մարաշեցու (մահ. 1162 թ.) դամբանական ներբողը՝ նվիրված Քեսունի և Մարաշի տիրակալ օտարապգի իշխան Բալդուինի եղերական վախճանին: Իշխանը սպանվել է 1146 թ. թուրքերի կողմից Եդեսիան գրավելու ժամանակ: Մարաշեցին Բալդուին իշխանի խոստովանահայրն էր և մեծ ակնածանքով ու գովեստով է խոսում նրա մասին: Իշխանը, Մարաշեցու վկայությամբ, «առաւել սիրէր կապգն Հայոց, քան կՓռանգաց» և անթերի գիտեր հայերեն: Դամբանականը պահպանվել է Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության շարունակող Գրիգոր Երեցի երկի մեջ»[118]:

Մարաշեցին, իբրև վարդապետ, մեծ տեղ է տալիս Բարոյա-աստվածաբանական խորհրդածություններին, իշխանի մահը դիտում որպես նրա մեղսասեր վարքագծի անխուսափելի հետևանք, իր իսկ՝ Մարաշեցու հորդորների և խրատների քամահրանքի հետևանք: Դամբանականի գեղարվեստական բարձր արժեքը պայմանավորված է նաև նրա ընտրած հորինվածքի բնույթով: Մարաշեցին բարառնաբար խոսում է սպանված իշխանի անունից՝ «ի դիմաց նորա և բերանով իբր նա[119]» և, խորապես ճանաչելով իշխանին, նրա սխալներն ու մոլորությունները վերագրում է իրեն, նրա մեղքերը համարում է իր մեղքերը: Բարառնությունը հնարավորություն է ընձեռել հեղինակին աՀեղեծելու քնարական խոստովանության, ինքնավերլուծության անմիջական մթնոլորտ, որը հագեցած է թե՛ զգացմունքների շիտակությամբ և թե՛ պատումի ճշմարտացիությամբ: Հոգեբանական այս ներսուզումների մեջ զգալի է Նարեկացու ազդեցությունը:

ԺԲ դարից սկսած ավելի բազմաբան են դառնում չափածո ներբողները: Այստեղ ևս հասարակական-քաղաքական տրամադրություններն ու հայրենասիրական զգացումները իրենց դրոշմն են դնում նյութի արտացոլման թե՛ բովանդակության և թե՛ ձևի վրա: Ներբողագիրն ավելի քիչ տեղ է տալիս հերոսի կյանքի դրվագների պատկերմանը, ավելի շատ արտահայտում է իր հուզական վերաբերմունքը, բացահայտում իր ներաշխարհը: Դա անձնական քնարերգության շեշտ է հաղորդում չափածո խոսքին: Իր գնահատանքի մեջ էլ հեղինակը ելնում է սեփական համակրանքից ու հակակրանքից, քան ներբողելի անձի գործից, նրա իրական պատմական դերից ու նշանակությունից: Սա լայն լուռ է բացում չափազանցված գնահատության համար: Եվ այնուհանդերձ ակներև է կարգացման ընթացքը: Աշխարհիկ մտածողությունը դառնում է գերիշխող, անհատական գծերի պատկերման նախասիրությունը հնարավորություն է տալիս ուրվագծելու կենդանի բնավորություններ, լեզուն հարստանում է ժողովրդական-խոսակցական տարրերով, ոճի մեջ խաչաձևվում են ողբի ժողովրդական և ներբողի գրական հատկանիշները և, ընդհանուր առմամբ, դամբանական ներբողները դրսևորում են գրականության զարգացման նոր վերելք ԺԱ—ԺԷ դարերում:

Ժանրի կրած այս ներքին փոփոխությունները ցայտուն են արտահայտված ԺԲ դարի հեղինակներ Վարդան Հայկազնի «Տաղ գերեզմանական վասն փոխման Գրիգորի Վկայասիրի»[120] և Խաչատուր Սկևռացու «Ողբ ի տէր Ներսէս արհին Տարսոնի»[121] ներբողներում: Վարդան Հայկազնը ժամանակակից է եղել Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսին (մահ. 1105 թ.): Հայկազնն իր ծավալուն դամբանականը (եղել է 800 տող, պահպանվել է 783 տող) գրել է ժամանակի աշխարհիկ լեզվով, պարզ, սրտառուչ հուզականությամբ, հատված առ հատված փոխելով հանգը: Վկայասերի մահը նա դիտում է որպես համազգային վիշտ և հայրենասիրական իր զգացումներն է արտահայտում ներկայի անմխիթար կացության վերաբերյալ: Այդ հատվածները հատկապես խոր ազդեցություն են թողել Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմի վրա:

Չափածո դամբանականի գողտրիկ նմուշ է նաև Խաչատուր Սկևռացու՝ Ներսես Լամբրոնացուն նվիրված ներբողը: Այն գրված է, Ղևոնդ Ալիշանի բառերով ասած, «ժամանակին աշխարհիկ լեզվով», «շատ սրտաբուղխ և աննման»[122]:

Չափածո ներբողները բազմացան ուշ միջնադարում: Դրանց հեղինակները հաճախ բանաստեղծներ չեն, այլ ուղղակի գրագետ մարդիկ, եկեղեցականներ, տպագրիչներ, գրիչներ և այլն, որոնք ցանկանում են մեծա-

[118] «Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ», Երուսաղէմ, 1869, էջ 473—500: Տես նաև՝ **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 375—395: Տես նաև ֆրանս. թարգմանությունը. Recueil des historiens des croisades, T. I, 1869, Paris, էջ 204—222.

[119] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, էջ 381:

[120] «Բազմավէպ», 1873, էջ 264—271:

[121] «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 254—256:

[122] Ղ. **Ալիշան**, Հայապատում, էջ 433:

րել ժամանակի բարերարներին, հայրենասեր անձանց, պանծացնում են նրանց ազգաշահ որևէ գործ՝ վարժարանների, տպարանների հիմնադրում, հին մատենագիրների երկերի հրատարակություն, նվիրատվություն և այլն: Այդ բնույթի ներբողները շարունակվեցին նաև ԺԹ դարում: Ահա, օրինակ, Հովհաննես Ավդալյանցի՝ Հարություն Գալուցյանի հիշատակին նվիրված ներբողը՝ գրված գրաբար[123]: Հարություն Գալուցյանը եղել է Կալկաթայի հայկական վարժարանի հիմնադիրը, երեսունհինգ տարի գործել է այնտեղ: Ներբողը մի պարզ չափածո շարադրանք է՝ առանց բանաստեղծական ավյունի ու թռիչքի, ուր շռայլորեն դրվատվում են Հարությունի մարդկային առաքինությունները, և, բնականաբար, ներբողագիրը հորդորում է հետևել նրա ազգանվեր գործունեությանը.

Տեսի՞ք սորա քաջարութեանց վիանդէս՝
Օ՛ն, գնացէք և արարէք դուք նոյնպէս[124]:

1826—1829 թթ. ռուս-պարսկական և ռուս թուրքական պատերազմների հաղթական ավարտը և Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու պատմական մեծ շրջադարձը իրենց բանաստեղծական արձագանքները գտան նաև տաղերի ու ասքերի, երգերի ու ներբողների մեջ՝ նվիրված ինչպես ռուսաց կայսրին՝ Նիկոլայ Առաջինին, այնպես էլ ռուսական բանակի զորահրամանատարներին՝ Պասկևիչին, Մադաթովին, Ցիցիանովին, Կրասովսկուն, Երմոլովին, Դավիդովին և այլն[125]: Մայր Աթոռի ապատագրությունը ևս դառնում է ներբողման նյութ[126]: Այդ գործերը, սակայն, այժմ, ավելի շուտ գրա-պատմական արժեք ունեն, քան գեղարվեստական: Դարաշրջանի անմահ երկը մնում է անկրկնելի Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը:

* * *

Ներբողագրությունը հայ միջնադարյան գրականության մեջ հարատևել է նրա զարգացման բոլոր փուլերում: Գրականության ընդհանուր վերելքին համընթաց ներբողը ևս վերելք է ապրել, անկմանը զուգընթաց՝ անկում: Հայ ներբողագիրները, մանավանդ Ե—ԺԵ դարերի հեղինակները, հմուտ են եղել ճարտասանական արվեստի գիտության մեջ: Նրանց մի մասը ստեղծել է բարձրարվեստ գործեր, որոնք կարող են համարվել այդ ժանրի համաշխարհային գրականության լավագույն գործերից:

Հայ ներբողագրության մեջ ազգային երակն ու երանգը ցայտուն են դրսևորվել ազգային կյանքից և իրականությունից վերցված նյութի և, հատկապես, հայ մշակույթի ու գրականության, եկեղեցական ու պետական գործիչներին նվիրված ներբողներում: Ազգային ինքնատիպությունն ամենից առաջ արտահայտվել է հասարակական-քաղաքական, եկեղեցական մաքառման ու դավանաբանական հակամարտությունների և ազգային ապատագրական պայքարի արտացոլման մեջ՝ ժանրի ընձեռած հնարավորությունների և ընդգրկման սահմանների մեջ: Հայ ներբողագրությունը տոգորված է քրիստոնեական վարդապետության կրոնական աշխարհայեցողությամբ: Սա ընդհանուր գիծ է: Կրոնասիրությունը, սակայն, ինքնանպատակ չէ, այլ հայ իրականության մեջ հանդես է եկել որպես հայրենասիրության, ազգային ինքնությունության արտահայտություններից մեկը: Դա պայմանավորված է եղել այլադավան, այլակրոն օտար նվաճողների դարավոր տիրապետությամբ Հայաստանում:

Հայ նոր գրականության մեջ ներբողը դրսևորվել է նոր կերպարանափոխություններով: Ավանդականը մնում է ոճի վսեմությունն ու հանդիսավոր տրամադրությունը, հրապարակախոսական-ճարտասանական շունչն ու ճոխ լեզուն: Սա նշանակում է, որ ներբողը գրականության հին և մշտապես վերածնվող ժանրերից մեկն է, որը մեր օրերում ևս բացահայտում է զարգացման նոր գծեր:

---

[123] «Ներբող յօրինեալ յիշատակ բարեպաշտին Գալուցեան պարոն Յարութիւնին երեսուն և հինգամեայ արդիւնաշատ վարժապետին», Կալկաթա, 1834:

[124] Նույն տեղում, էջ 13:

[125] Տես «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ», բնագրերի պատրաստումը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Պ. Հ. Հակոբյանի, Երևան, 1978 թ. 143—144, 148—151, 161—162 և այլն:

[126] Նույն տեղում, էջ 117—119, 131—132:



# «ЭЧМИАДЗИН»
# ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
# (ОКТЯБРЬ 1984 г.)


1. Энциклика Католикоса всех армян Вазгена I по случаю исполнения божественной литургии в Армянской Апостольской Церкви, в обработке Хорена Мейханеджяна, 20 октября 1984 г. (стр. 3—4).

2. Поздравительная телеграмма Католикоса всех армян Вазгена I генеральному секретарю Всемирного Совета Церквей доктору Эмилио Кастро, 18 июля 1984 г. (стр. 5).

3. Ответное письмо новоизбранного генерального секретаря доктора Эмилио Кастро Католикосу всех армян Вазгену I, 13 августа 1984 г. (стр. 6).

4. **Редакционная.** 60-летие по случаю образования Верховного Духовного Совета в первопрестольном Эчмиадзине (стр. 7—10).

5. Энциклика приснопамятного Католикоса всех армян Георга V об утверждении Верховного Духовного Совета в первопрестольном Эчмиадзине, 1 января 1924 г. (стр. 11—13).

6. Энциклика приснопамятного Католикоса всех армян Георга V об утверждении членов Верховного Духовного Совета в первопрестольном Эчмиадзине, 1 января 1924 г. (стр. 14—15).

7. Приветственное послание приснопамятного епископа Торгома Гушакяна, предстоятеля армянской епархии в Египте, Католикосу всех армян Георгу V по случаю утверждения Верховного Духовного Совета в первопрестольном Эчмиадзине (стр. 16—17).

8. Информационное сообщение Канцелярии Эчмиадзинского Католикосата от 12 сентября 1984 г. (стр. 18).

9. Информационное сообщение Канцелярии Эчмиадзинского Католикосата о создании новой комиссии, согласно законодательству Армянской Апостольской Церкви от 10 октября 1984 г. (стр. 19).

10. Прибытие блаженнейшего архиепископа Шнорка Галустяна, патриарха Армянской патриархии в Турции, в первопрестольный Эчмиадзин, 13 сентября 1984 г. (стр. 20).

11. Проповедь, произнесенная блаженнейшим патриархом Армянской патриархии в Турции архиепископом Шнорком Галустяном в Кафедральном соборе на празднике Св. Креста Варагского, 30 сентября 1984 г. (стр. 21—23).

12. **Священник Петрос Малян**—Паломничество блаженнейшего патриарха Шнорка в Гегардский монастырь, 25 сентября 1984 г. (стр. 24—26).

13. Торжественное открытие учебного года в Эчмиадзинской Духовной Академии, 10 сентября 1984 г. (стр. 27—28).

14. Хиротония верховного архимандрита Вазгена Кешишяна, предстоятеля армянской епархии в Канаде и верховного архимандрита Татева Гарибяна, предстоятеля армянской епархии в Бразилии, во епископы, 14 октября 1984 г. (стр. 29—32).

15. Биография епископа Вазгена Кешишяна (стр. 33—34).

16. Биография епископа Татева Гарибяна (стр. 35).

17. Церковная жизнь (сообщения): литургии, прочие церковные обряды, проповеди, произнесенные в Кафедральном соборе в октябре 1984 г. (стр. 36—38).

18. Пребывание главы Евангелическо-Лютеранской церкви в Латвии архиепископа Яниса Матулиса в первопрестольном Эчмиадзине, с 12 по 15 октября 1984 г. (стр. 39).

19. Открытие памятника-родника в монастыре св. Гаянэ, 23 сентября 1984 г. (стр. 40—41).

20. Кончина благотворителя первопрестольного Эчмиадзина Саркиса Кюркджяна (стр. 42—43.)

21. **Диакон Степан Карапетян**—Члены армянского молодежно-религиозного союза армянской восточной епархии в США в первопрестольном Эчмиадзине (стр. 44—46).

22. Вести из армянской епархии Ирака (стр. 47—48).

23. Вести из армянской епархии Румынии (стр. 49—51).

24. Вести из армянской церковной общины Вены (стр. 51—52).

25. **Аршалуйс Казинян**—Панегирика в средневековой армянской литературе (исследование) (стр. 53—60).



# "ETCHMIADZIN"
## OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
## (OCTOBER 1984)


1. The encyclical of His Holiness about the execution of „Khoren's mass" in all the Armenian churches, 20th October 1984 (pages 3—4).

2. The congratulatory cable of His Holiness to Dr. Emilio Castro, the new elected General Secretary of the World Council of Churches, 18th July 1984 (page 5).

3. The letter of Dr. Emilo Castro to the Catholicos of all Armenians, 13th August 1984 (page 6).

4. **Editorial:** The 60th anniversary of the creation of the Supreme Spiritual Council of Holy Etchmiadzin (pages 7—10).

5. The encyclical of Gevorg V, the late Catholicos of all Armenians about the establishment of the Supreme Spiritual Council in the Holy See, 1st January 1921 (pages 11—13).

6. The encyclical of Gevorg V, the late catholicos of all Armenians, about the designation of the Supreme Spiritual Council's first members, 1st January 1924 (pages 14—15).

The letter of greeting of Bishop Torgom Gooshakian, the late primate of the Armenians of Egypt, to Gevorg V, the Catholicos of all Armenians, on the occasion of the establishment of the Supreme Spiritual Council in Holy Etchmiadzin (pages 16—17).

8. The communiqué of Holy See's chancery, 12th September 1984 (page 18).

9. The communiqué, of Holy See's chancery, about the creation of a committee for the new constitution of the Armenian Church (page 19).

10. The visit at the Holy See of His Grace Archbishop Shenorhk Galoostian, of the Armenians of Constantinople, 13th September 1984 (page 20).

11. The sermon of His Grace Archbishop Shenorhk in the Holy Cathedral, on the occasion of the feast of „the Holy Cross of Varag", 30th September 1984 (pages 21—23).

12. **Father Bedros Malian**—The pilgrimage of His Grace Patriarch Shenorhk to the monastery of Holy Geghard, 25th September 1984 (pages 24—26).

13. The reopening ceremony of the Spiritual Seminary of Holy Etchmiadzin, 10th September 1984 (pages 27—28).

14 The ordination as Bishop of Reverend Dr. Vasken Keshishian, the primate of the Armenians of Canada, and of Reverend Dr. Tatev Gharibian, the primate of the Armenians of Brazil, 14th October 1984 (pages 29—32).

15. The curriculum vitae of Bishop Vasken Keshishian (pages 33—34).

16. The curriculum vitae of Bishop Tatev Gharibian (page 35).

17. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of Church festivities in the Holy See during the month of October 1984 (pages 36—38).

18. Official visit at Holy See of Etchmiadzin of His Excellency Janis Matoolis, Archbishop of the Lutheran Church of Latvia, 12—15th October 1984 (page 39).

19. The inauguration of fountain monument in the monastery of Holy Gayaneh, 23rd September 1984 (pages 40—41).

20. The death of Sarkis Kurkjian, benefactor of the Holy See (pages 42—43).

21. **Deacon Stepan Karapetian**—The members of the Church Youth organization of the eastern diocese of the Armenians of U.S.A. in the Holy See and the fatherland (pages 44—46).

22. **Diocesan life:**

A. News from the Armenian diocese of Iraq (pages 47—48).

B. News from the Armenian diocese of Rumania (pages 49—51).

C. News from the Armenian church community of Vienna (pages 51—52).

23. **Arshalooys Ghazinian**—The panegyric in the Armenian litterature of the Middle Ages (contiuation)—(pages 53—60).



# „ETCHMIADZINE"
## ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
## (OCTOBRE 1984)


1. Encyclique du 20 octobre 1984 de Sa Sainteté Vasken Ier annonçant l'ordre d'exécuter dans toutes les églises arméniennes la messe dite „Khorénian" (pages 3—4).

2. Télégramme de félicitation de Sa Sainteté adressé au Dr. Emilio Castro à l'occasion de son élection au poste de Secrétaire Général du Conseil Oecuménique des Eglises (18 juillet 1984)—(page 5).

3. Lettre du Dr. Emilio Castro, nouveau Secrétaire Général du COE, adressée à Sa Sainteté Vasken Ier (13 août 1984)- (page 6).

4. **Editorial:** „Le soixantième anniversaire de la création du Conseil Suprême Spirituel du Saint-Siège d'Etchmiadzine" (pages 7—10).

5. Encyclique du Ier janvier 1924 du bienheureux Catholicos Guévorg V annonçant l'établissement du Conseil Suprême Spirituel au Saint-Siège d'Etchmiadzine (pages 11—13).

6. Encyclique du Ier janvier 1924 du Catholicos Guévorg V concernant la nomination des premiers membres du Conseil Suprême Spirituel du Saint-Siège d'Etchmiadzine (pages 14—15).

7. Lettre du feu évêque Torgom Gouchakian, ancien prélat des Arméniens d'Egypte, adressée au Catholicos de tous les Arméniens Guévorg V à l'occasion de l'établissement du Conseil Suprême Spirituel au Saint-Siège d'Etchmiadzine (pages 16—17).

8. Communiqué du 12 septembre 1984 de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine (page 18).

9. Communiqué du 10 octobre 1984 de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine concernant la création d'une commission pour le nouveau règlement de l'Eglise apostolique arménienne (page 19).

10. Visite au Saint-Siège d'Etchmiadzine de Sa Béatitude Chenorhk Galoustian, patriarche des Arméniens de Constantinople (13 septembre 1984) —(page 20).

11. Sermon de Sa Béatitude Chenorhk Galoustian prononcé dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de „la sainte Croix de Varag" (30 septembre 1984)—(pages 21—23).

12. **Père Pétros Malian**—„Pèlerinage de Sa Béatitude Chenorhk Galoustian au monastère de Saint-Guéghard" (25 septembre 1984) — (pages 24—26).

13. Reprise des cours d'études au séminaire théologique du Saint-Siège d'Etchmiadzine (10 septembre 1984)—(pages 27—28).

14. Description de la cérémonie du sacre de l'évêque Vasken Kéchichian, prélat des Arméniens du Canada, et de l'évêque Tatev Gharibian, prélat des Arméniens du Brésil (14 octobre 1984)—(pages 29—32).

15. Curriculum vitae de l'évêque Vasken Kéchichian (pages 33—34).

16. Curriculum vitae de l'évêque Tatev Gharibian (page 35).

17. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois d'octobre 1984 (pages 36—38).

18. Visite officielle au Saint-Siège d'Etchmiadzine de Son Excellence Janis Matoulis, archevêque de l'Eglise luthérienne de Lettonie (du 12 au 15 octobre 1984)—(page 39).

19. Inauguration du monument-fontaine au monastère de Sainte-Gaïanée (23 septembre 1984)—(pages 40—41).

20. Nécrologie du regretté bienfaiteur Sarkis Kurkdjian (pages 42—43).

21. **Diacre Stépan Karapétian** — Visite au Saint-Siège d'Etchmiadzine et à la mère patrie d'un groupe de jeunes pèlerins arméniens, membres de l'„Union de la Jeunesse Arménienne" du diocèse des Etats-Unis (région orientale)—(pages 44—46).

22. **Vie diocésaine:**

a) Nouvelles du diocèse des Arméniens d'Irak (pages 47—48).

b) Nouvelles du diocèse des Arméniens de Roumanie (pages 49—51).

c) Nouvelles de la communauté ecclésiale des Arméniens de Vienne (pages 51—52).

23. **Archalouïs Ghazinian**—„Le panégyrique dans la littérature médiévale arménienne (suite et fin)—(pages 53—60).



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը՝ համայն Հայաստանյայց եկեղեցիներում Խորենյան Պատարագի կատարման մասին . . . 3
Ամենայն Հայոց Հայրապետի շնորհավորական հեռագիրը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Էմիլիո Կաստրոյին . . . . . 5
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Նորընտիր գլխավոր քարտուղար դոկտ. Էմիլիո Կաստրոյի պատասխան նամակը Ամենայն Հայոց կաթողիկոսին . . . . 6
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի ստեղծման 60-ամյակը . . . . . 7
Երջանկահիշատակ Տ. Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Գերագույն Հոգևոր Խորհուրդ հաստատելու մասին . . . 11
Երջանկահիշատակ Տ. Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ նշանակելու մասին . 14
Եգիպտոսի հայոց առաջնորդ հոգելույս Տ. Թորգոմ եպիսկոպոս Գուշակյանի ողջույնի գիրը Տ. Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Գերագույն Հոգևոր Խորհուրդ հաստատելու առթիվ . . . . . 16
Հաղորդագրություն . . . . . 18
Հաղորդագրություն . . . . . 19
Կ. Պոլսի հայոց Պատրիարքի ժամանումը Մայր Աթոռ Ս. Էջմիածին . . . . . 20
Ամենապատիվ Տ. Շնորհք Պատրիարքի քարոզը Մայր տաճարում «Վարագա Ս. Խաչի» տոնին . . . . . 21
ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԱ ՄԱԼՅԱՆ—Ուխտագնացություն Ս. Գեղարդա վանք . . . 24
Հոգևոր ճեմարանի վերաբացման հանդիսություն . . . . . 27
Եպիսկոպոսական ձեռնադրություն . . . . . 29
Տ. Վազգեն եպիսկոպոս քեշիշյան . . . . . 33
Տ. Տաթև եպիսկոպոս Ղարիբյան . . . . . 35
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր . . . . . 36
Լատվիայի Ավետարանական-լութերական Եկեղեցու պետ Տ. Յանիս Մատուլիս արքեպիսկոպոսը Մայր Աթոռում . . . . . 39
Աղբյուր-հուշարձանի բացում Ս. Գայանե վանքում . . . . . 40
Հանգիստ Սարգիս Քյուրքճյանի . . . . . 42
ՍՏԵՓԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—Այցելություն հայրենիք՝ ուխտի և վերանորոգման 44
ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ
Լուրեր Իրաքի հայոց թեմից . . . . . 47
Լուրեր Ռումինիայի հայոց թեմից . . . . . 49
Լուրեր Վիեննայի հայոց եկեղեցական համայնքից . . . . . 51
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՂԱԶԻՆՅԱՆ—Ներբողը միջնադարյան հայ գրականության մեջ . . 53
„Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 61
„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin . . . . . 62
„Etchmiadzine" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine . . . . . 63



**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ**
**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ**
**«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ.**
Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 2.11.1984 թ.: Ստորագրված է տպագրության 25.12.1984 թ.:
Տպագրական 4 մամուլ+1 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 865:

**Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1984 թ.**



ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՏՈՒՆԴԱՄԵ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ